



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



3159

3160

3161

3162

3163

3164

28

U-84







201





Handwritten  
870

Handwritten  
870



50

Printed in Turkey

22002



Ե Ղ Օ

ՕՐՊԱՐՏՈՒԹԵԱՆՑ

ՈՐ

Ի ՏԵՏՐԱԿՆ ՏՊԵԱԼ Ի Կ. ՊՕԼԻՍ

ԵՒ ՄԱԿԱԳԵԱԼ

Կենսագրութիւն Ռոբէն Անդրէաս Յ. Փափուզեան

Բաղնարարիւն Սարգիստի, ևն :

Տպ. Կրթութեան / Կրթ. Յ. Կրթութեան

ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՏԵՏԵԱՆ

1859





371.1

ԿԿ. Ե Ղ, Օ

ՔՐՊԱՐՏՈՒԹԵԼՆՑ

ՈՐ


Ի ՏԵՏՐԱԿՆ ՏՊԵԱԼ Ի ՊՈՍՏԱՆԻՆՈՒԳՕԼԻՍ

ԵՒ ՄԱԿԱԳԻԵԱԼ

Կենսագրո-լի-ն Ռո-բէն Ընդրէ-ս Բ. Փախաշ-ան

Բաղձարդի-ն Վարժապետի, ԼՆ :

Տեղ: Պրինսիպ աթ. Յ. Դարպաչանի



ՋՄԻԻՌՆԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵԱՐՈՒԹԻՒՆԻ ՏԵՏԵԱՆ

1859

Mr. J. O.

ST. PAUL, MINN.

1878

RECEIVED

NOV 18 1878

51386-42

RECEIVED

7418-27

RECEIVED

1878

## Չ. Ե Կ ՈՒ Ց ՈՒ Մ Ն

Թեպէտ ըստ ինքեան յայտնի սուտը ճշմարտէն որոշելոյ մեծ դժուարութիւն չկայ ողջամիտ Հասարակութեան, ասկայն ազէկ է ամէն ժամանակ գայթակղութեանց արգելք դնել :

Ներկայ տարւոյս մէջ 'ի Առտանդնուպօլիս' 'ի Տպարանի Յ. Փափագեան տպեալ' և Ալեքսանդրաբէն Ասէն Ալիբէա Յ. Փափալեան Բաղճարդի Լարճապետի, և ն մակագրութեամբ հրատարակեալ տետրակին մէջ ցիր և ցան ախուսած գառն զրպարտութիւնքը տեսնելով, որ Չմիւռնիոյ Հայ ազգին և Հոգաբարձուաց և մասնաւորաբար մեզի դէմ էն, թէպէտ ակամայ՝ այլ 'ի հարկադրութեանց ստիպուեցանք՝ խզէ մտօք գրել առաջիկայ տետրակս, հանգերձ խոչեմու թեան պահանջած չափաւորութեամբն, առ 'ի ցոյցանել մեր անմուտութիւնք՝ գլխաւորաբար վասն մեր եղած անհիմն և անիրաւ զրպարտութեանց դէմ, թողլով այլոց պաշտպանել և իւրեանց իրաւունքը :

Բայց հարկ չէ մեզ հին Օրինականաց նման փող հարկանել առջեւէն մեր բանից ճշմարտութեանը համար, քանզի ճշմարտութիւնք չեպարի պէտք չունի, և ճշմարտասէրք միայն կրնն զսյն :

Մնայ մեզ ուրեմն խոնարհաբար հայցել Արդոյ ընթերցողաց ներողամտութիւնը վասն առաջիկայ գործոյս, զոր՝ ինչպէս յայտնի է՝ ակամայ ստիպուեցանք գրել, այլ՝ չափաւորապէս և բարի դիտաւորութեամբ :

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳԻՍ

Յ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Վարժադեա Հայկաբանութեան

Մերսոզեան Վարժարանին

Չմիւռնիոյ :

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի Գրադարանի կողմից հրատարակված գրքերի ցանկը:  
Հայաստանի Գրադարանի կողմից հրատարակված գրքերի ցանկը:  
Հայաստանի Գրադարանի կողմից հրատարակված գրքերի ցանկը:

**Հայաստանի Գրադարանի կողմից հրատարակված գրքերի ցանկը:**

Ստեփան Գրադարան:

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի Գրադարանի կողմից հրատարակված գրքերի ցանկը:



Ե Ղ Ծ

ՉՐՊԱՐՏՈՒԹԵԱՆՑ

ՅՕԴԵԼՈՑ

Ի Պ . Սփէֆանէ . Պ . Պօղոս Փափաղեան

Խառնի-ղջույ :



ՕՄԱՐԴԻԿ 'ի բարին կրթելոյ և յօժարեացունելոյ այլևայլ միջոցներ հնարած են քաջահամուտ իմաստասէրք . անշուշտ ամէն մարդ գիտէ՝ որ այսպիսի միջոցներէն մէկն է մեծ և առաքինի մարդոց կենսագրութիւնը , որ երեք գլխաւոր նպատակաց համար կը գրուի : Առաջինն է , Աստուծոյ երախտեաց 'ի գոհութիւն յորդորել զմարդիկ , որ կարող է յամենայնի նաև 'ի քարանց յարուցանել բարեսցապարտ անձինս : Երկրորդն է , պատուելի անձանց աշխարհի վերայ ունեցած կենցաղավարութենէն շինութեան՝ և ոչ գայթակղութեան օրինակներ ընծայել , այսինքն՝ անոնց բարի վարութիւն զայլս խրատել : Երրորդն է , անոնց 'ի կենդանութեան ըրած բարեաց փոխարէն՝ շնորհակալութիւններն նորոգել :

ըստ արժանւոյն :

Արդ՝ այս երեք գլխաւոր նպատակաց ժամանելոյ համար՝ գրիչ մը ի՛նչ մեծ ձիրքեր կամ յատկութիւններ պէտք է որ ունենայ՝ թէ որ երբէք ազգին շինութեան օգտակար ըլլալու ոչ միայն կամք ( որ բազմիցս զկամեցողն անգամ կը պատրէ ), այլ մանաւանդ յարմարութիւն իսկ ունի : Յստակամիտ անձինք գիտեն և կը հասկընան ի՛նչ ըսել կուզեմք : Օ՛ր ոչ թէ ստոյգ մէկու մը կենսագրութիւնը՝ այլ լի վիպասանութիւն մը անգամ գրելը, միայն թէ դպրոցական շարագրութեանց սահմանին մէջ չմնայ գործը, մեզի կերևայ թէ՛ շատ գիւրին բան չէ : Ս՛իւշդեռ այսօրուան օրս ողջոյն Աւրոպա այնպիսի արժանաւոր պատմագիրներ՝ որոնք ստուգիւ յաջողակ ըլլան ազգաց օգտակարութեան՝ յառաջ բերելոյ համար Վայսերական կրթարաններու մէջ նախապատիւ դասարաններ որոշած է, ուր և մեծ ուշադրութիւնք կըլլան : Ս՛ածներնէս կը հետևի թէ՛ մեծ և առաքինի մարդոց կենսագրութիւնը՝ մեծ և առաքինի մարդոց գործն է գրել : Աերսէս Շնորհալիի մը վարքը՝ Աերսէս Ամբրոնացի մը պէտք է որ գրէ :

Այսպէս և Օ՛միւռնիոյ Ս. Սերոպեան վարժարանին հանդուցեալ մեծիմաստ Ս. Անդրէաս վարժապետին կենսագրութիւնը հարկ էր անշուշտ ծանրաբարոյ, բանագէտ և անկողմնակալ գրչէ մը ՚ի լոյս ընծայուիլ. բայց ընդ հասկառակն՝ ծանրաբարոյ, բանագէտ և ընտրող անձի մը ընելու գործը՝ դժբաղդաբար տեսանք

մօտերս գործադրուած կամ չարչրկած ութեւ տասնամեայ և քանի մը ամսոց անփորձ պատանւոյ մը գրչին տակ 1 :

Այս ութեւ տասնամեայ անփորձ և անվարժ եւրօտասարգը ( ըստ վկայութեան անձին իւրոյ և գործոյն ) է Պ , Ստեփան Պ . Պօղոս Փափաղեան անուամբ մեր առ երեսս բարեկամը , որ հանգուցեալ վարժապետին կենսագրութիւնը գրելոյ պատրուակին տակ վերջին ճիգն է թափեր իւր վաղեմի ոխն ու վրէժը՝ որ առ մեզ և առ ոմանս՝ լուծելոյ :

Իւր գրած տետրակը ոչ թէ կենսագրութիւն վարժապետին՝ այլ աւելի մահագրութիւն փառացն է , յորում ննջեցեալը բամբասանաց առարկայ կրնէ , և պիտի ընէ ևս , եթէ չեմք սըխալիր : Օրի՛ի նմա անգիտութեամբ , ըսեմք , կը ցուցրնէ զվարժապետը չնչին խնդրոյ մը , այսինքն՝ Տաճիկ դասատու մը պաշտօնէն ձգելոյ համար ընդհանուր ժողովրդեան խաղաղութիւնը վեր ՚ի վայր հարկանելու յօժարամիտ . կամ թէ՛ կարծուած դոյզն լաւութեան մը համար ամբողջ ժողովրդոյս ամենալաւ սէրը խղրատելն նախա-

1. Ձի 1857ին ինքն իւր գրչաւ կը վկայէ ըսելով . « Բայց լսուելով որ այս աշխատութեան ի՞ ուրեքսանամեայ անփորձ և անվարժ հասակն համար պոպոյսան արդեան մը սեղոտի ու Արդ 1857էն մինչև 1858. Օգոստոս 10. (կենսագրութեան տետրին թուականն) դուցէ և ամբողջ տարւոյ մը միջոց չկար ինչպէս շուտ ուրեմն իւր ութեւ տասնամեայ և քանի մը ամսոց անփորձ և անվարժ հասակը մտցեր է . ուրեմն ինքն իւր իսկ գրչաւ կ'ապացուցնէ իւր աստի և անտի մտերացած՝ և իւր նրամանեացը հաւնիլ ցրցուցած գործոյն տղայական արդիւնք ըլլալը . հարկ չմար մեզ բան մը յաւելուլ վրան :



մեծար համարող • իբր թէ ամենևին խոհեմու •  
 թիւն չունէր հանգուցեալ վարժապետը • Օր-  
 մանալ՛ գրիչ, որ իւր նպատակին ո՞րն ըլլալը չճա-  
 նաչէր, կամ թէ՛ չ՛ կարող հասկնալ թէ՛ ի՞նչ  
 հետևու թիւն յառաջ կուգայ գրածներէն •  
 Քանի մը անձանց համար գովեստ է, չէ՞, ան-  
 յայտ • և ոմանց արհամարհանք գրել, ըստ իւր  
 քմաց կողմ և կուսակցութիւն հնարել, զամանս  
 առանց ստոյգը գիտելոյ այս կողմը դասել և  
 զամանս այն կողմը • մէկ խօսքով, խառնուրդ մը՝  
 յորմէ շատ բան պակասած և շատ աւելորդ կամ  
 օտար պարագայք վրան յաւելած : Բայց այս-  
 պէս ընել պէտք էր՝ որ իւր հնացեալ նպատա-  
 կին հասնէր, այսինքն՝ մեզի դէմ ունեցած ոխն  
 ու վրէժը լուծանէր : Սուսի վերջին դէպքին  
 մէջ զմեզ իսկ խառնելով և քանի մը զարհու-  
 րելի յանցանք դնելով մեր վերայ՝ իւր գրչին  
 առարկայ է ըրեր մեր անունը • և ինքը, որ ե-  
 դելութեան աւելի մերձ էր քան զմեզ, և ոչ  
 սակաւ չարեաց արմատ և պատճառ, ինչպէս  
 վարժապետը շատ անգամ կը խօսէր և ցարդ  
 իսկ կը վկայէն գիտցողները, ինքն, կրտսմք,  
 ծայրիւ մատին չգպչիր դրած բեռին, և վարժա-  
 պետին տուած այլանդակ գովեստներուն տակ  
 իւր տգեղութիւնը ծածկել կը ջանայ : Բայց ինչ-  
 պէս ինքն իսկ գիտէ • Աշխարհի վերայ ստու-  
 թիւն, կեղծաւորութիւն, գաղտնիք կանուխ  
 կամ ուշ յերևան կ'ելնէ միշտ, և ճշմարտու-  
 թիւնն ամէն ժամանակ բարձր ՚ի գլուխ կը ոյանա  
 ծայ : Եւ ահա եկաւ, հասաւ ժամանակը՝ յո-



բում շինծու փետուրներն փետտուին : Օ՛ր մեք այսչափ ժամանակ լռութիւն պահելով թէպէտ չէինք բաղձար քողք բանալ և յանցաւորը նշաւակել, սակայն՝ որովհետեւ իւր յանցանքներն մեր վերայ գիղելով՝ ոչ միայն ինքզինքն յաջմարդկան արդարացունել, այլև զմեզ յանցաւոր զրպարտելով ինքնայարմար և մեղրաշուրթն բանիւք կը ջանայ քաղաքէս դուրս Հայ հասարակութիւնը խաբել՝ մեր անունը իբրև ծանր յանցաւոր դնելով ամենից առջև, ստիպուեցանք ուրեմն զրպարտութեան զինուց բութ ըլլալը ցոյց տալ, իւր հսկայ սուտերը յանդիմանել, ահագին սխալները ցրուել, մեր անմեղութիւնը պաշտպանել ընդդէմ անիրաւ զրպարտութեանցըն, որպէս զի գոյթակղութիւնը մուտք չգտնէ բարեսէր հասարակութեան մտաց մէջ : Ար կրուկնեմք, խիստ անհաճոյ էր մեզ մեր գրիչը վաղափուլ շէնքի մը կործանման գործիքն ընել, որովհետեւ անհիմն շէնքն յաջս իմաստնոց ինքնակործան է ըստ անսուտ բանի Տեառն, սակայն մեք իւր խօսքերն իրեն դարձունելով սկսինք :

Օ՛րմանալի է արդարև որ մարդիկ երբեմն վերջին ճգամը կ'աշխատին ճշմարտութեան դէմ, զինելու, և երբեմն ալ իրենց կրիցը զսհելու համար չեն խնայեր ոչ առաքիներաց պատիւը և ոչ ազդականութեան սէրը : այսպէս կրնէ Պ. Ստեփան, Պ. Պ. Փափաղեանը, իւր վրէժխնդրութեան ոգին մեղի դէմ յագեցուցնելոյ, համար չխնայեր ոչ մեզի և ոչ վարժապետին՝ նախատինք արձանացունել իւր մտաց յատուկ նը-

պատակին համար հրատարակած տետրակին մէջ,  
 զոր Պարսաւատետր Օ՝միւսնացուց կ'անուա-  
 նեմք : Օ՝միւսնիա չէր կրնար անշուշտ անտար-  
 բեր կալ նախատանաց՝ որ առ ինքն և առ հան-  
 գուցեալ վարժապետն . ուստի վստ Պարսաւա-  
 տետրին քաղաքս մտած երկրորդ օրը, յորում  
 Սէտր . վարժարանս հանգուցելոյն մահուան եր-  
 կրորդ տարեդարձը պիտ կատարէր, նոյն սգալի  
 հանգիսին մէջ, կըսեմք, աշակերտաց պարագա-  
 յին համեմատ ոտանաւոր և արձակ ճառերը  
 կարդացուելէն ետև հրապարակաւ խայտառա-  
 կեցաւ վստ Պարսաւատետրը 'ի սէր հանգուցե-  
 լոյն փառաց և առ 'ի ջնջումն դայթակղութեան՝  
 որ կրնար գուցէ տեղի ունենալ պարզամիտ սըր-  
 տից մէջ :

Բայց մեք յառաջ երթանք ցուցնելոյ հա-  
 մար թէ՛ ի՞նչ է եղեր երիտասարդ հեղինակին  
 մեղի դէմ ունեցած սխն ու վրէժը և պտու-  
 ճառքն, և ապա իւր մեղմէ քինահանութեան  
 եղանակը :

Պ . Ստեփ . Պ . Պ . Փափաղեանը Հայերէն Բե-  
 րականութեան առաջին սկզբունքն և Ալճէպրա  
 դաս տալու խոստմամբ մտաւ Սէտր . վարժարա-  
 նը . թէպէտ հոգաբարձուք կը ճանաչէին պատա-  
 նուոյ մը զօրութիւնը, սակայն 'ի շնորհս մօրեղ-  
 բօրն հանգուցելոյ և որբութեանն ընդունուե-  
 ցաւ : Սէր վարժարանին յառաջագէմ աշա-  
 կերտքն՝ որ թուարանութեան մէջ կոտորակաց  
 հաշիւներն, Արեքի, Համեմատութեան, Բն-  
 կերութեան ևն կանոններն քաջ սորված էին՝

տաղտկալով թուաբանութեան առաջին դուռէն  
 դաս սկսիլ անյագ փափաճմամբ խոստացուած  
 Ալճէպրան կը պահանջէին, բայց 'ի զուր: Այլ-  
 սան աշակերտք մեզի թախանձել որ Ալճէպրայի  
 դաստուան համոզենք դասն սկսելու, բայց ո-  
 րովհետեւ այն դասին ուշանալուն բուն պատճա-  
 րն չէր մեզի յայտ՝ ժամանակ մի համբերու-  
 թիւն կը պատուիրէինք տղայոց: Բայց երբոր  
 համբերութիւնը յաղթուեցաւ ժամանակէն, և  
 արդէն խոստմունքներն սպառած էին և շատ  
 պայմանաժամեր լրացած, մէք իրաւունք տուինք  
 տղայոց: Ասեց Պ. Ստեփ. Պ. Պ. Փափաղեանը,  
 և 'ի խոր խոցեցու: Դարձեալ խոստմունքներն  
 սկսան նորոգուիլ: Բայց թուի թէ՛ Ալճէպրայի  
 արժանաւոր կամ աշակերտ չկար կամ վարժա-  
 պետ. վերջապէս Ալճէպրայի խոստմունքը ձրգ-  
 ձրգուելով՝ այս տարի Պօլիս՝ Փրկիչ գնաց: Բաջ  
 հասկցաւ Պ. Ստեփ. Պ. Պ. Փափաղեանը զի քա-  
 նի որ մէք 'ի դպրոցն եմք՝ ինքն իւր խաղը պի-  
 տի չկարէ խաղալ, ուրիշ միջոց ընտրեց. դասա-  
 բանին մէջ փոխանակ Ալճէպրայի գրաբառ լե-  
 զուին վերայ բարակ բարակ դիտողութիւնք ը-  
 նել սկսաւ, ժամանակէ մը ետեւ անոր հետա-  
 խաղաղ ծածկուիլը կը մարգարէանայր, ուստի  
 գրաբառ շարագրածք կամ քերթածք անօգուտ  
 են, մեռեալ են՝ ըսելով՝ օրագրաց երևալու  
 օրերն մեր քերթուածները Ալճէպրայի տեղ կը  
 կարգայր անոնց անպիտանութիւնը ցուցընելով:  
 Աշակերտաց մէկ փոքր մասը հաւատաց մեզրա-  
 շուրթն բանիցը, և կարծես թէ Հայկաբանու-



Թեան համար առաջին եռանդն երթալով կը նուազէր յոմանս • անշուշտ մեզի դէմ ըլլալով իւր անարժան շարժումները՝ մեք հակառակը կը պնդէինք : Պ . Ստեփ . Պ . Պ . Փափաղեանին ցասումն օրըստօրէ սնունդ կ'առնոյր մեզի դէմ , իւր բամբասանաց առարկայն էինք հանապաղ : Բայց մեծ ցասումը փոքր ճարակով չյագիր • Ըսկըսու Օմիւռնացի Հայոց քաղաքական և ուսումնական ընթացքը բամբասասէր մտօք դատել , բողոքատել ուրիշ քաղաքաց հետ : Աշակերտք Ալճէպրայի դասի տեղ այս դասերը կը սորվէին • վերջապէս երբ Ալճէպրայի համար իւր բոլորովին տգիտութիւնը յայտնեցաւ , մեծ աշակերտաց ումանք քաշուեցան գացին դպրոցէն , մնացածներն դասարան չէին երթար , ուստի թուաբանութեան դաս կուտար փոքունց , որ շատ ժամանակ չտեւելով տն ալ դադրեցաւ : Այս ամէն անպատեհութիւնները լիովին չէինք իմացուներ վարժապետին որ սիրտը չվշտացունենք , իսկ հագարաճուաց՝ ընաւ , որպէս զի վրէժխնդրութիւն չկարծուէր փոխան իւր զմեզ ատելոյն • Բայց Պ . Ստեփ . Պ . Պ . Փափաղեանը մեր համբերութեան տրիտուր սրտին մէջ բունեալ ոխը կը սնուցանէ եղեր : Թուաբանութեան դասը կըրկնատումարին հետ Ղազղիացի վարժապետի մը յանձնուեցաւ • ալ Պ . Ստեփ . Պ . Պ . Փափաղեանին յարաբերութիւնները վերին ուսումնարանէն բոլորովին դադրելով՝ միաքերը խաղաղած կը կարծէինք , մինչև ցայժմ երբէք մտքերնէս չէր անցնէր թէ իւր սիրտը այսչափ ոխակալու



Թեան կրնար ենթակայ ըլլալ : Տօնելի եղաւ Արտաւազդայ սխն ընդդէմ Ամբատին : Գուցէ այս սուհետե իսկ նոր և օտար զրպարտութիւններ և ս հնարէ մեր վերայ , այն իւր խղճմտանաց դիտնալու բանն է : Այս բունեալ սխն ու վերէժը քանի՛ անգամ և ինչ կերպիւ լուծել փորձեց՝ խօսելը մեր առաջիկայ նպատակը չըլլալով՝ առ այժմ՝ դեննք մեր ընթերցողաց առջև իւր մեղի դէմ սնուցած սխոյն ինքնահնար քինահանութեան եղանակը , զոր Օմիւռնիոյ մէջ շատ անյաջող փորձերէ ետև այս տարի Պօլիս հասածին պէս առաջին դործն եղաւ դառն զրպարտութեամբք ՚ի զլուխ հանել :

Պ . Ատեփ . Պ . Պ . Փափագեանը իւր տետրին մէջ զմեզ ՚ի սկզբան վարժապետին սիրելի և հարազատ ևն անուանելէն ետև մի միայն վերջին դէպքի մը մէջ՝ նախ՝ անկոտորով կը գատէ : Երկրորդ՝ անհաւատարմութեան միջոց կը գնէ վարժապետի գաղտնի խօսեցածները բարբոսութեամբ և չափազանցութեամբ հոգեբարձուաց ականջն հասցունել : Երրորդ՝ անհաւատարմութեան շարժառիթ կ'ստեղծէ ինքն՝ անյոգ փառասիրութեամբ լցուած բաղանջ մը մեր կողմանէ վարժապետին պէղը փոխանակել :

Օրպարտութիւնք զիւրաւ կը ցրուին ճշմարտութեան առջև :

Առաջին զրպարտութեան կը պատասխանէ մք :

Վարժապետին և մեր մէջ ամենեւին թշնամութիւն մը չկար՝ որ այդ պիտի անարժան անկոտորովութիւն մը տեղի ունենար , այլ հայրական և որդիական սէրը փոխադարձաբար կը վայելէինք :

մեր մէջ . զի մեր երկոտասանամենի մանկութիւն  
 նր 'ի նորին խնամս յանձնուած ըլլալով՝ մինչև  
 մեր ութեասանամեայ հասակն յոտս նորա կա-  
 տարեցի՛ք մեր սուսման ընթացքը . և թեպէտ  
 վեց ամաց չսի գպրոցէն անջատեցանք բայց ոչ  
 վարժապետէն , զի նա՝ որ չէր սովոր յաճախել  
 իւր մտերիմ բարեկամաց տունը , շուրթ չէր  
 անցնէր՝ որ չգար առ մեզ , նոյնպէս և մեք առ  
 նա : Սեր գրուածքները իրեն ցուցընելով սըր-  
 բագրութիւն կը խընդրէինք , և ինքն իւր գըր-  
 ուածքներն զուարթ գիմօք մեզ կը ցուցընէր  
 “ առաւել տեսանեն աչք քան ակն ” ըսելով ,  
 զոր անձնգովութեան համար չեմք խօսիր , այլ  
 իւր առ մեզ և մեր առ նա անհամեմատ սէրը  
 'ի յոյտ բերելոյ համար : Արդ գիւրին է երեա-  
 կայիւ թէ 'ի նչ ուրախութիւն հարկ էր զգալ  
 վարժապետը մինչ հոգարարձուք կը հրաւիրէին  
 զմեզ 'ի պաշտօն երկրորդ վարժապետութեան 'ի  
 Սերս . վարժարանն . 'ի նչ մեծ բերկրութիւն ու-  
 նեցանք երկաքանչիւրս մինչ 'ի միում բնակու-  
 թեան գիրկընդխօռն եղանք իրերաց : Ասան ու-  
 ըոյ խիստ հակասական է զրպարտչին զմեզ առ  
 վարժապետն անհաւատարիմ գտնելը , զ' բնաւ  
 յարմարութիւն մը չկար այս բանին՝ այլ հսկայ  
 լերինք կ'անջրպետէին : Այլ ընդ հակառակն՝ մեք  
 ճշմարիտ բարեկամութեամբ վարժապետին հա-  
 տատարիմ մնալոյ համար մինչև անգամ նոյն իսկ  
 մեր անձին անհաւատարիմ մնացինք . զի այնպի-  
 սի յուղման պարագայի մէջ մեր անձը կը պա-  
 հանջէր չեզոք մնալ . մեք այնպէս չըրինք , այլ

ընդդէմ արտաքին թելադրութեանց ինչ վարժապետն յորդորել ջանացինք, թէպէտ յայանի էր որ ազդեցութիւն պիտի չունենայինք սակայն գարձեալ աշխատեցանք, թելադրողները և մեզնի թշնամի ընելու յանձնառու եղանք գիտնալով որ վարժապետը գործիք մնէր ձեռքերնին, կը ցաւէինք վրան ու սիրտը կը հաստատէինք ոչ լիկ բանիւք այլ և անուրանալի գործովք: Որոց աստ մի առ մի թուելը աւելորդ կը համարիմք, չկամելով մեր գրիչը մեր անձին գովութեան գործիքն ընել:

(1). Չէ՞թէ Պարսաւատետրին ՉԴ էրիսը յանուանէ կամ սիրբնա. ասուիւք յիշատակուած պատուական անձինքն էին այս թելադրողք, ոչ էրէքք. այլ այն յարգելի անձինքն ասու գիւ մեծի պատու արժանի անձինքն էն. զի ոչ թէ կողմնակալ ոգւով վարժապետը ազդէն կամ ազգը վարժապետէն բաժնել կուզէին, այլ ինչպէս և գրեւն և կամ նամակներն՝ խաղաղատէր ոգւով կը ջանային յազմունքը ցածու ցանել, ամէն բան իւր բնական կարգին դնել, վերջապէս ազգին բարելուու թեան կը ցանկային, և ոչ թէ՛ ընդդէմ ազգին վարժապետէն կուսակցութիւն կազմել, ինչպէ՞ս կը կեղծէ հասարակութիւնը: Սկսելիս իւր այս խօսիւքը կը ջանայ Երկար և հարկաւ թեան սրտն սերմանել ժողովրդեանս մէջ, ազգութիւք կը այցիմք յերկնից որ շարժուի հասնել իւր այսօրինակ վնասատէր և չար նպատակին, մէկ կողմանէ ալ յաւատի՞ կը գոչմք. թողլու գիտնայ զի իւր տղայածիք բուժ նետը չկրնար ազդել և ոչ իսկ գծել ջնջուանոյ բնաւորութեան դէմ յորում ինչպէս յայտնէ՛ լաւաբանն իւր իւր վիճակեալ զբաղմանց և պարտուց կը պարտայի: Այլ մեր այն թելադրողաց անուանքն չեմք կամիր աստի գրի հարկանել. զի անոնց մեզի գէմ ըրած գործքերն մեք աւագի վերայ գրած ըլլալով նոյն ժամանակէն անյիշ չար եմք իրենց և չունիմք վե՛րժանդիւր սպի. թէպէտ Պ. Սաեփ. Պ. Պ. Փափուղեանը իւր սաստիկ կրակոտ բարաց սխալալ սգիէն բռնկած՝ անլար զբարբառութեանց առարկայ է ըրեր մեր անունը, որով իւր առ մեզ ոչնչած վե՛րժանդութիւնը քաջայայտ կ'ապացուցանէ ինքն իւր տղայական նեւտիքն՝ յիսնամեայ կեանքի մը պատմութեան մէջ առանց սերիշ մեկուսը անունը գտնելու՝ մերը յանիրաւի բժաւորել ճգնելով:



Բայց մինչդեռ մեք այն ճգանց մէջ էինք, Պ. Ստեփ. Պ, Պ. Փափաղեանը որ զմեզ անհաւատարիմ կը համարի, ի՞նչ հաւատարմութեան գործեր կրնէր արդեօք . . . լսկ հանդիսատեսի պաշտօնը կը վարէր, տեսնել՝ թէ իրքն ո՞ւր պիտի եղերին. սքանչելի հաւատարմութիւն: Իսկ մեր նոյն տուննի գործքերն ոչ միայն անտես յաւացց նորա մնացեր են, այլ՝ դժբաղդաբար ՚ի ներհակէն կը տեսնէ եղեր. անշուշտ թշնամի աչք մը ասկէ աղեկ չէր կրնար նշմարել:

Օրպարտելով խնդրես վրէժ:

Յիշեա՛ զի չես դու աստ յաւեժ:

Լսկրորդ զրպարտութեան կը պատասխանեմք: Պ. Ստեփ. Պ. Պ. Փափաղեանը իւր պարսաւատեարին ՉԵ՛ Երեսը կը գրէ թէ՛ մեք վարժապետին առանձնութեան մէջ խօսեցածները հոգաբարձուսց ականջն հասուցեր եմք եղեր: Օտրմանալի է յիրաւի իւր խիղճը. որպէս զի զմեզ յանցաւոր համբաւէ՛ միջոց, առիթ չէ թողէր, ամէն բան հարեր է: Բայց մեք առ այժմ զինքըն իւր բերանով դատեմք: Եթէ վարժապետին խօսքն և գործքը առանձնական և գաղտնի էին, իւր տեարին Մըրի մէջ գրածին համեմատ՝ աշխարհի վերայ գաղտնի պէտք չէ մնայ՝ այլ յերևան գայ միշտ իսկ եթէ գաղտնիք չէր, ինչո՞ւ ուրեմն յանիրաւի թէ՛ զմեզ և թէ՛ զվարժապետը կը բամբասէ: Մանաւանդ ևս իւր գրածին նայելով՝ վարժապետը բարեկամաց առջև կը խօսի եղեր, և բարեկամաց թիւը ու անուանքն անորոշ թողլով՝ ինքնին իւր մեր վերայ դրած զրպարտութիւնը



երկբայելի կրնէ . որ ճշմարտանման անգամ չէ :  
 Բնդ հակառակն՝ վարժապետը ոչ միայն բարե-  
 կամաց՝ այլև աշակերտաց հետ կը խօսէր զնոյն  
 բաները՝ զոր մեր հակառակորդը գաղտնիք կը  
 համարի . անշուշտ գաղտնիք չէ և չկրնար ըլլալ  
 աշակերտաց անգամ գիտցածը : Բայց վարժա-  
 պետը թէպէտ կամելու ըլլար իւր խօսքերը իր-  
 րև գաղտնիք պահել՝ բնաւ անմարթ էր , զի ինչ-  
 պէս կ'ըսէ . Չիք ինչ 'ի ծածուկ որ ոչ յայտ-  
 նեացի : Եւ հետևաբար՝ աշակերտաց նոյն մի-  
 ջոցին դուրսերը խօսեցածնին՝ դպրոցին անկար-  
 դու թիւններն էին , որ և անհնար էին միան-  
 գամայն և անվայել՝ թագ չիլ 'ի սեփհական հս-  
 գաբարձուաց դպրոցին . վասն որոյ դպրոցը  
 խաղաղելոյ նպատակաւ և վարժապետին հրամա-  
 նաւը՝ հոգաբարձուաց մեր խօսեցածնիս գաղտ-  
 նիք բանալ չէր , զի խէթ մը չունէինք վարժա-  
 պետին դէմ՝ նոյնպէս մեր հակառակորդին ( զի  
 ինքն ևս լսող բարեկամաց մէկն էր ) ան ատեն  
 ասդիս անդին խօսեցածներուն համար կը կար-  
 ձեմք գրիչնիս ըսելու թէ՛ գաղտնիքներ կը բա-  
 նայր , թէպէտ վարժապետէն և անոր կնոջմէն  
 յոյժ ցաւած ըլլալուն՝ միշտ կը բամբասէր զի-  
 րենք , զոր յառաջ երթալով պիտի ցուցնեմք :  
 Բայց վարժապետին հրաժարման և յուզմանց  
 պատճառն այս չըլլալը դէպքին տեղեակ անծինք  
 և իւր իսկ խիղճը 'ի ներքուստ կը վկայեն , իսկ  
 մեր հակառակորդը ընդդէմ իւր խղճի մտաց՝  
 յուզմանց պատճառ՝ մերթ զմեզ մերթ Տաճ-  
 կերէնի Հայազգի դասատուն կը հռչակէ : Բնչ

զարմանալի յերիւրմամբ մէկմէկօւ մէջ հիւսեր  
 է իւր սուտերը՝ շարունակ երեք տարի մտածե-  
 լով վրան, բայց ամսնս սնտի աշխատութեանն,  
 զոր երեք շաբաթուան մէջ գրուած ճշմարտու-  
 թիւնը դիւրաւ և անջան կը խայտառակէ : Իսկ  
 մեր այն ժամանակն հոգաբարձուաց ըսած խօս-  
 քերնիս մեք ինչպէս ՚ի սկզբանէ չճածկեցինք,  
 նոյնպէս և յաւիտեան չենք ուրանար, զի ոչ  
 սուտ խօսեցանք, ոչ զրպարտութիւն ըրինք և  
 ոչ չար դիտաւորութիւն ունէինք, և ոչ վարժ-  
 ժապետէն ծածուկ խօսեցանք, զոր մեր հակա-  
 ռակորդը Տափնութիւն և նախապինք կ'անուանէ : այլ  
 մեր խօսքերուն ինչ ըլլալը և այժմ ՚ի լուր աչ-  
 խարհի կը խոստովանիմք, որ ամէն մարդ հաս-  
 կընայ թէ Տափնութիւն չէ, զի կ'ըլլար մատնութիւն՝  
 եթէ մեք ինքնին և առանց վարժապետին գի-  
 տակցութեան գաղտուկ խօսեցած ըլլայինք :  
 արդ գործոյն եղելութիւնը, զոր և սրտագէտն  
 Մտուած գիտէ, այս է : Աշակերտաց մեջէն Ձ  
 կամ Յը չկամելով հնազանդիւ վաղեմի Տաճիկ  
 դասատուին՝ (որոյ յաջողակութեանը վերայ  
 տարբեր կարծիք ունէին վարժապետն և հոգա-  
 բարձուք) դանոնք հնազանդեցունելոյ համար  
 շատ փորձեր եղաւ վարժապետին ձեռք ըստ  
 ապսպրանաց հոգաբարձուաց, յընթացս այն  
 անյաջող փորձերուն ուրիշ աշակերտք ևս մի-  
 աջան յանհնազանդութիւն Տաճիկ դասատուին,  
 որով սկսան անկարգութիւնք օրըստօրէ շատնալ  
 և դպրոցին բարեկարգութիւնը աղաւաղելոյ  
 վտանգին մէջ մտնել :

Բայց թէ ինչ էին այն անկարդութիւնքն մեք  
կը հրատարիմք տեսակաւորել զանոնք , զի նպա-  
տակ դրած չեմք մեզ դժպատեհ առիթ մինտրել  
յանդէպս բամբասելոյ զանցեալն ընդ ներկային,  
այլ գիտեմք քաջ զի ծանր և ապօրինաւոր գործ-  
քեր էին՝ որ կըլլային թէ՛ ՚ի ներկայութեան  
հոգաբարձուաց և թէ՛ ետեւէն, վասնորոյ և սը-  
դէն յայտնի էին նոցա : Բայց երբ ստորագրու-  
թեամբ ամանց աշակերտաց հոգաբարձուի մը  
գէմ գրուած անարգութեան նամակին բազմա-  
թիւ օրինակներն տարածեցան քաղաքիս մէջ .  
ալ այնուհետև գործը ծածկելն անհնարաւոր  
եղաւ :

Միոցաւ վարժապետը որ այն նամակը զինքը  
ընդհանուր հարցուփորձի տակ պիտի ձգէր , զոր  
արգելոյ ուրիշ հնարը չկար յայնմ հետէ՝ բայց  
միայն ճշմարտուիլը խոստովանելով . չկամեցաւ  
վարժապետը ինքնին անձամբ երթալ ժողովոյն  
հարցուփորձին ենթակայ ըլլալու<sup>1</sup> , այլ զմեզ զրկեց  
որ ճշմարտը խօսելով միանգամայն զինքը ջատա-  
գովեմք : (Սէք մինչև ցայն վայր խորին լռուի  
կըպահէինք, իսկ եթէ կամէինք ենթարկեալ գաղափարը  
յայտնել՝ ինչո՞ւ պիտի սպասէինք , միթէ անկէ  
յառաջ հազար անգամ չէինք կրնար յայտնել ,  
բայց մեք երախտագիտութեան դէմ չմեղանչե-  
լոյ համար լու համարած էինք մեր խղճմտանքը  
անդգայի պէս անտարբեր ընել՝ քան բացխփիկ

(1). Այս կտորը տեսարակին 284 երեսը անուայգ ժամանակաւ մը  
տրպէս մեկնուած է . վարժապետը այնոյ յանձնարար իշխար ըլիտը յանցար  
դատել :



Ճշմարտութիւնը մեք ինքնին յայտնել՝ զի Գաղա-  
 նիս դուրս հանելոյ չար սովորութիւնը մինչև  
 ցայժմ մեր վերայ տեսնուած չէ, զոր արդարա-  
 ցի պարծանօք կը խօսիմք, և չկայ մէկը որ յան-  
 դիմանէ զմեզ յայսմ մասին, բայց եթէ ոխ ու-  
 նենայ, և քաղաքացիք թէ՛ եկեղեցականք և թէ՛  
 աշխարհայինք իրենց գաղտնիքը կատարեալ վըս-  
 տահուք մեր խորհրդապահուէ՛ ՚ի բնէ անտիվըս-  
 տահացած են այնպիսի գրուէց հանապազօրեայ  
 սովից մէջ, որոնք մեծագոյն մասամբ ներքին  
 և ամենածանր խնդիրներով լի են։) (Յիրաւի  
 ծանր էր մեզ վարժապետին այս հրամանը կա-  
 տարել, բայց չկատարելը վարժապետին աւելի  
 ծանրագոյն. վասն որոյ սաստիկ ստիպուած էինք  
 երթալ և ջատագովել զնա։ Բայց կը հարցու-  
 նեմք, մի՞ թէ սուտեր կարկատելով յառաջ կեր-  
 թա՞ր մեր ընելու ջատագովութիւնը, եթէ երբէք  
 յառաջ կերթար՝ ըսուի, մեք չունիմք այդ ճար-  
 տարութիւնը և անտարակոյս ստախօսութեամբ  
 պաշտպանութիւն ընելը մեծ չարութիւն ընել է  
 և հիմն չունենար և ո՞ր օրէնքը հրաման կուտայ,  
 կամ ո՞ր ողջամիտ խղճմըտանքը կըններէ Ազգային  
 ժողովոյ մը սուտեր կլէցընել, մանաւանդ թէ՛  
 նամակը ստորագրող աշակերտաց գիտցած գոր-  
 ծոյն հնա՞ր էր սուտեան կերպարանք հագուե-  
 ցունել՝ առանց երկնչելոյ ՚ի չարաչար խայտա-  
 ռակութենէ՛ որ կըլլար ՚ի հարկէ մեր սուտը  
 բռնուելով՝ երբոր աշակերտը իրաց ճշմարտու-  
 թիւնը բացարձակապէս խօսին իրենց ծնողաց  
 կամ մեծերուն։ Արդ մեք՝ որ ամէն կողմէ



ստիպուած էինք ճշմարիտը խօսել՝ խոհեմնութիւն  
 համարեցինք չէ՛ թէ բոլոր հոգաբարձուաց՝ այլ՝  
 անոնցմէ վարժապետին աւելի խորհրդակից մե-  
 կուն միայն խոտովանել առանձին գործոյն  
 ստոյգ եղելութիւնը, միանգամայն ամենայն զո-  
 բութեամբ պաշտպան կեցանք վարժապետին  
 դատին պնդելով թէ՛ այս ամէն անկարգութիւնք  
 թէ դպրոցին մէջ և թէ դուրսերը Տաճիկ դա-  
 սատուին չհանուելոյն համար կրլսան : Ասկէ աւե-  
 լի կամ պակաս բան մը ըսած չըլլալնիս ետքէն  
 ծագած դիպուածներէն ալ քաջայայտ կերևի՝  
 ինչպէս որ վարժապետը ՚ի պատճառս նամակին  
 հարցութիւնը չկոչուեցաւ, վասնորոյ՝ և շնորհա-  
 կալ եղած էր մեզմէ զինքն այնչափ և անսուտ  
 կերպիւ ջատագովելնուս համար, և ոչ թէ վըշ-  
 տացած, զի եթէ վշտացած ըլլար՝ իւր վշտապա-  
 տում յիշատակարանաց մէջ կրնար բան մը գրել  
 մեզի համար, ընդ հակառակն երկաքանչիւրոցս  
 մէջ սիրոյ հաղորդակցութիւնը անընդհատկը  
 շարունակուէր : Բայց երանի՛ թէ վարժապետը  
 մեզ յանձնած չըլլար այդ գործը, որ թիւր  
 մեկնութեց առարկայ ըրաւ մեր հակառակորդը :  
 Այս փաստերը տեսնել չկրցողին կամ չուզողին  
 այս միայն կրսեմք, այնպիսին եթէ հանդերձեալ  
 աշխարհի մը կը հաւատայ, թող գիտնայ՝ զի եթէ  
 աստ չհամոզուի՝ անդ անխափան կը համոզուի,  
 այս կերպիւ ալ չհաւատացողին չէ՛ թէ համոզ-  
 ուելոյ փաստ՝ այլ՝ կամք կը պակսի :

Արդ թող անաչառապէս դատեն զմեզ ընթեր-  
 ցողը, եթէ արժանի եմք դատապարտութեան՝

նախ մեք զմեզ կը դատապարտեմք, զի չեմք  
 կամիր աչս աչառել, ի՞նչ չար դիտաւորութիւն  
 կայ այս մեր խօսքին մէջ՝ որ աւելի վարժապե-  
 տին դատին նպատակը նպատակաւ և նորին հրա-  
 մանաւ խօսեր էինք, զի դպրոցին անկարգութիւն-  
 քը հոգաբարձուաց իմացունեւումնիս արգէն  
 յայտնած եղանք թէ անոնք Տաճիկ դասատուն  
 չհանուելոյն պտուղքն էին, և ՚ի մեր բանից  
 բնականօրէն կը հետեւէր Տաճիկ դասատուն  
 բացարձակապէս հանուելը ինչպէս կը կամեր  
 վարժապետը, ուստի քաջայայտ է զի վարժա-  
 պետին նպատակին նպատաւոր էին մեր խօսքե-  
 րը առ հոգաբարձուս, և ոչ իւրիք միտասակար,  
 և վարժապետն երբէք վշտացած չէր մեր այս  
 խօսիցն համար զի և չէր զանխուլ իրմէ: Աւ-  
 ի՞նչ իրաւամբք կըսէ թէ՛ եղած, անցածը հոգաբար-  
 յոաց ակնջը կը հասցընէր, անըողս նպատակ իր ունէր:  
 Արեւ, անցածը ըսելով՝ ի՞նչ ըսել կուզէ, բա-  
 րիք արդեօք եթէ չարիք: Աւելի աղէկ կ'ընէր  
 թէ որ բացայայտ կերպիւ իբրև ՚ի սուսունջեան  
 խօսէր և ոչ թէ խաւարային նետիւք վերաւորել  
 ջանայր, որ յիրաւի ճշմարտութեան համար  
 թղթի վերայ ամէն կերպ հալածանք յանձն առ-  
 նուլ խոստացողի մը չխայելեր: Բայց մեք ուրախ  
 եմք որ զմեզ այն անբասիր յանցանաց տէր ընել  
 կ'ուզէ, այսինքն՝ դպրոցին ընթացքը ոչ օտարաց  
 կամ անպաշտօն համազգեաց՝ այլ նոյն իսկ դը-  
 պրոցին տարեկան հոգաբարձուաց յայտնած  
 ըլլալնիս իբրև յանցանք կը համարի մեզ. եր-  
 ջանիկ յանցանք, ընդ որ ուրախ եմք հանապաղ՝





գուցանելոյ համար Այլի՛ն մէջ իւր տուած մեծա-  
մեծ և ազդու խոստմունքն ու խրախոյսները ,  
մարդ մը այսչափ շուտ կը մոռնայ եղեր իւր  
խօսքերն , ուրեմն յիշեցունեմք իրեն . Վիպե՛մ որ ,  
կ'ըսէ , Ճշմարտութիւնն խօսելոսն համար պիպի՛ն նախապտո՛ւմ ,  
արհամարհո՛ւմ , Բնամանո՛ւմ , Բամբաստո՛ւմ 1 , Բայց փոյթ  
չէ՛ ինչ , Բաւական է որ Ճշմարտութեան ճանապարհէն չխո-  
պորիմ , իրաւունքն ու արդարութիւնը յետո՛յ չցփեմ , աւե-  
լի ո՛րսին պիպի ըլլամ և մեծ փառք պիպի սեպեմ ինչ ճըշ-  
մարտութիւնն ըսելոսն համար անարգո՛ւիլս ու հալածո՛ւիլս ,  
այլովքն հանդերձ :

Արդ եթէ կը համարի թէ՛ ճշմարտութիւնը չծած-  
կեցինք , ինչո՞ւ կը նախատէ՞ զմեզ , իսկ եթէ կը  
համարի թէ՛ ծածկեցինք , ինչո՞ւ յանցաւոր կը  
դրպարտէ զմեզ , յիրաւի շատ դժուարին է եղեր  
կրքոտ և կողմնակալ գրչի մը ինչ ըսել ու զելը  
որոշ հասկնալ : Բայց որպէս զի դրպարտութիւնը  
աւելի կծու և ազդու ընէ , կ'աւելցունէ , Բարձ-  
րո՛ւթեամբ և չափազանցո՛ւթեամբ : Պատասխանելոյ ան-

(1) . Ինչէ՛ն գիտէ կամ կը համարի որ պիտի նախապտուի , արհամարհուի ,  
Բնամանուի , Բամբաստուի , միթէ՛ բոլոր աշխարհ ստուծեան մէջ թաւա-  
լեր է , և ի՛նք միայն սուրբ , անարատ և անբիծ մնացեր է ստուծե-  
նէ . կամ թէ՛ բոլոր աշխարհ խօսքը մէկ ըրած պատրաստ կեցեր է ին՛ն  
զինքը նախապելոս և այլն : Ո՛չ , ո՛չ , այլ յայտ իսկ է՛ զի ինքն ան-  
գամ իւր գրածին սահասուտ զանգուած ըլլալը գիտելով , և իսկէքն  
զգալով թէ՛ իւր սուտերն երկար ժամանակ քօղի տակ պիտի չմնան ,  
այլ շուտ պիտի յանդիմանուին , վասն որոյ նախազգացմամբ իմն կը  
ջանայ խեղճ միտքերը կանխել և նախապաշարել իր անչին դեմ նախափե՛ք  
արհամարհանք , Բնամանք , Բամբաստանք համարելով իւր չարաչար սխալանաց  
յետագայ եղմունքն՝ յորոյ կը խիթայր : Չարմանալի՛ տղջական  
խեղք . կը կարծէ որ ասանկով կրցաւ խաբել զհասարակութիւնը և  
նախապաշարել :



գամ պէտք չունին այդ երկու բառերը, որ ըստ  
ինքեան լոկ բարդութիւն և չափազանցութիւն  
են։ Օ՛ր պատանւոյ մը անգամ խելքը կրղզոյ  
թէ՛ բարդած և չափազանց խօսքը յառաջ չբա-  
ւեր, ծնած տեղը կը հեղձնու կը մնայ։ Աւստի  
իւր գործոյն արդանքն արշալիսն և անիրջ և անխրժ-  
մտաց արդիւնքը լայն ասով ալ յայտնի ըլլալուն  
հարկ չմտար մեզ երկար փաստերով ապացուցա-  
նել։

Իայց մեք առ այժմ ՚ի բաց թողլով իւր մեր  
վերոյ դրած անիրաւ զոպարտութիւնը՝ արդարա-  
ցի բողոքով քննենք զինքն իւր տետրակին մէջ։  
Ի՞նչ զարմանք որ մեզի համար վարժապետին  
գաղտնիքը յայտնեց ըսողն՝ ինքը վարժապետին  
ենթադրեալ գաղտնիքը ՚ի լուր աշխարհի կըտա-  
րածէ իւր Պարսաւատետրով։ յորում վարժա-  
պետին յիշակարաններէն (թէ որ ստոյգ են) փոքր  
հատուածներ մէջ բերելով՝ զվարժապետն  
ընդհանուր աշխարհի առջև իբրև դժգոհ, ան-  
համբեր ոգւոյ տէր կամ ազգին ենթադրեալ  
թերութիւններն անջինջ արձանացունող անձ մը  
կը հանդիսացունէ, որ ընդ հակառակն մեք վար-  
ժապետին չեմք տար որ իւր յիշատակարանաց  
մէջ առանց ընդունած բարիքները նշանակելոյ  
ամբողջ ժողովուրդ մը դատած ըլլայ իբրև վա-  
տաց խումբ և պարտաւոր կացուցանէ ինքեան  
մինչդեռ իւր բերնէն բազմիցս լած եմք Իտա-  
լերէն պատուական առակը։ «Պրէ անիրաւու-  
թիւններն աւաղի վերայ, իսկ բարերարութիւն»

ներն անջնջելի վիժի վերայ : Արդ ինչո՞ւ , կ'ըսեմք , Պ . Ստեփան Պ . Պ . Փափաղեանը իւր տըղայ գրչաւ կը ճգնի ցուցունել զվարժապետը իբրև իւր խօսքին հակառակ անձ մը՝ գրող անիրաւութիւններն անջնջելի վիժի վերայ , իսկ ընդունած բարերարութիւններն աւագի վերայ : Ինչո՞ւ , կ'ըսեմք , առանց անգամ մի խղճմտանքի ձայնին ունկն դնելոյ կը բամբասէ զվարժապետը , զմեղ և ամբողջ ժողովուրդ մը : Թո՞ղ ուրեմն ականերև տեսնուի թէ՛ ո՞վ է վարժապետին Գաղափար յայտնելոյ յարմար ոգին . ի՞նքն թէ՛ այլք :

Պարձեալ , ի՛նչ զարմանք , վարժապետն իւր յիսնամեայ կենաց մէջ ուրիշ մէկէ մը վիշտ կրած չէր արդեօք : Եթէ չէր՝ ուրեմն ամէն հողածնաց երջանկագոյնն էր , ուստի հարկ մը չէր ստիպէր զինքը գանգատալից ընել իւր յիշատակարանը : Իսկ եթէ յայլոց ևս վշտացած էր՝ ինչո՞ւ Պ . Ստեփան . Պ . Պ . Փափաղեանը զայն վիշտերն ևս հանդերձ վշտացուցիչ անձանց սնուամբքն չփոխադրեր իւր Պարօաւատետրին մէջ , ինչո՞ւ չհրատարակեր , որ ըսածին համեմատ Գաղափար ևն յայսնոսին , արև տեսնեն : Արդ ըսած յիշատակարանքն՝ եթէ ստոյգ են ( զոր չեմք գիտեր ) , ինչո՞ւ ուրիշ վշտաբեր անձանց անուանքն չեն յիշուած , եթէ սուտ՝ ինչո՞ւ կը բամբասէ զազգը իբրև ապերախա : Թէ՛ որ ըսուի թէ՛ Անաստասիան շաղկն չխոսորելոյ համար չեն փոխադրուած . կը պատասխանեմք , ուրեմն այս եղածներն ալ պէտք չէին

փոխադրուիլ որ Կենսագրութեան շաւղէն չխոտորուէր . իսկ եթէ ըսուի՝ առ եղածներն Կենսագրութեան պարագայքն էին . մէք ևս կըսեմք, միւս մնացածներն ( թէ որ ստոյգ կան ) ինչպէն համարուիլ Կենսագրութեան պարագայք՝ ո՛չ ապաքէն յիսնամեայ կենաց անիւր անոնցքէ կը բաղկանայր :

Ս՛եր հակառակորդը իւր Պարսաւատետրին Յ6ր երեսին մէջ կը պնդէ նաև թէ՛ վարժապետըն հոգաբարձուաց ընթացքէն աւելի մեր անհուսապարտութեան վերայ յաւեր է եղեր: Յանդճուքն զրպարտութիւն : Ս՛եր առ վարժապետն երբէք անհաւատարիմ չգանուելնիս մանաւանդ և մեր հակառակորդէն շատ աւելի հաւատարիմ ըլլալնիս թէ և իւր առաջին և երկրորդ զրպարտութեանց դէմ տուած պատասխանուոյս մէջ յայտնեցինք և պիտի յայտնեմք ևս , սակայն հարկ է մտածել թէ՛ եթէ վարժապետն ամենէն աւելի մեղմէ վշտացած էր , ինչպէս իւր յիշատակարանաց մէջ մեր անունը ակնարկող բան մը չէ արձանագրած , մինչդեռ ըստ բանի զրպարտչին մերոյ գրեր և արձանացուցեր է այն անձանց գործքերըն՝ որոնցմէ քիչ վշտացած էր քան ՚ի մէնջ՝ ինչպէս ինքը կըսէ : Այլ եթէ , Աստուած մի՛արասցէ , իրաւ ըլլար հակառակորդին մեր վերայ դիզած զրպարտութիւնը , այսինքն՝ եթէ վարժապետըն իրօք վշտացած ըլլար մեզմէ , ի՛նչ արգելք կար վարժապետին իւր առանձնութեան մէջ ՚ի դրի հարկանել մեր անունը : Իսկ եթէ մեզի



համար իրօք այնպիսի բան մը արձանագրուած ըլլար վարժապետէն, կ'աղաչեմք, թող արգոյ ընթերցողք քննեն, ինչ մեծ և զօրաւոր փաստ պիտի ըլլար անիկայ մեր զրպարտչին, ինչ զէնք անոր ձեռքը, և ինչ անպատու՛մ բերկրու թեալքը ամէնէն յառաջ՝ առանց ետ ձգելու պիտի փոխադրեր այնպիսի հատուած մը իւր Պարսաւատետորին մէջ զմեզ հրապարակադոյժ ընելու համար, և մեք ինչպէս կրնայինք պաշտպանել մեր անմեղութիւնը այնպիսի հատուածի մը դիմացը: Աւրեմ լուեմք մեք, թող հանգուցելոյն հոգին ընէ այս մեծ բողոքը, որ իւր չքսածը, մանաւանդ և ըսածին հակառակը անխղճաբար կըսէ ու կը պնդէ մեր զրպարտիչը, որպէս զի վրէժը լուծէ: Անգամ մնալ ըսենք թող ուրեմն ակներև տեսնուի թէ՛ ո՞վ է վարժապետին Գաղանկը յայտնելոյ յարմար ոգին, ինքն թէ՛ այլք: Իսկ եթէ այսուհետև նոր յիշատակարան մը հնարելով մեր վրէժխնդիրը և վարժապետին յատկացունելով (այս կորը լեւեր էի, մոռցեր էի, կամ կորձ ընել կուզէի անոր համար չգրեցի) ևն պատճառանք պատճառելով նոր հատուած մը հնարելու ըլլայ, յայտնի է որ անվաւեր է և չընդունուիր քանզի հարկ է որ զրպարտութեան մեքենայները նախահոգ զգուշութեամբ կաշկանդեմք:

Աւրիշ խորհրդածութիւն մնալ ունիմք ընել այս տեղս: Ստածելու բան է յիրաւի՝ զի այսպիսի բնաբոյս բարուք երիտասարդ մը որ վարժապետին ոչ թէ Գաղանկը՝ այլ՝ չքսածն ու չգրա-

Տըն իսկ անխիղճ կ'ըսէ ու կը գրէ և 'ի լուր աշխարհի կը քարոզէ, ինչ բանէ կ'արգիլուէր արդեօք ասկէ երեք տարի յառաջ վարժապետին խօսքերը հանդերձ բարդո-լիտմբ և լավալանցո-լիտմբ անդին ասդին տարածելու, զի ինքը վարժապետին քեռորդին ըլլալով բնականապէս մեզմէ աւելի խորհրդակիցն էր և հարազատ ըլլալ պէտք էր անոր: Եթէ ըսէ թէ՛ ինք վարժապետին քեռորդին ըլլալուն չէր ընէր այնպիսի բան մը, կը պատասխանեմք, ինչպէս ուրեմն 'ի կենդանութեան վարժապետին կը բամբասէր զնա չնչին պատճառի մը համար, այսինքն չընդունուելուն համար 'ի տուն վարժապետին, ուր կը բաղձայր իւր բնակութիւնը հաստատել և մերժուեցաւ իսպառ, և յիրաւի ան ատենէն մեծ ցաւ ունեցաւ քրտին մէջ վարժապետին և անոր լծակից տիկնոջը դէմ: Այս բանին պատճառքն կերպիւ իւրք յայտնի իսկ է քաղաքիս հայ հասարակութեան: Արդ բնական և յայտնի բան է որ կրակոտ բնութիւն մը, Յուր կրած սիրտ մը, և Անդուուն բերան մը, մանաւանդ երբ այս երեքը մէկ անձին վերայ են, ամէն կապերը խզելով՝ բամբասող կըլլան և ենթադրեալ Գաղղիիը կը բանան: Այնպէս վարժապետին մահուանէն ետե՛ այլ և այլ պատճառներով ննջեցեալը բամբասելուն համար շատերէն անարգուեցաւ, յորոց զոմանս գովութեամբ և զոմանս պարօտանօք յիշատակած է ինքն իւր Պարսաւատետրին մէջ: Բայց թէ ինչ են այն այլ և այլ պատ-

Ճառքն , կուղեմք լուսութեան տակ ծածկել , զի մի՛ բողբոլին մերկ խայտառակ մնայ աշխարհի առջև : Օ , արմանալի՛ ընթացք՝ ան որ զվարժապետը ՚ի կենդանութեան մէկ կերպով՝ յետ մահուանն ուրիշ կերպով կը բամբասէր և կը դատէր , հիմա անոր կենսագրութիւնը ըստ քմացիւրոց կը յօրինէ : Ասան որոյ արևու ճառագայթից պէս յայտնի է իւր նպատակին ի՞նչ ըլլալը , այսինքն՝ յանցաւոր ճանչցունել զմեզ հասարակութեան առջև և յագեցունել իւր վրէժխնդրութեան ծարաւը՝ յանիրաւի և անխընայ դիզելով մեր վերայ իւր անարժան գործոց գումարը : Թայց Օ , օրաբաբէլ կը յանդիմանէ զայնպիսի մարդիկը ըսելով . Ո՛ՐԱՐՄԱՐԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐՄԱՐԹԻՒՆ ԵՒ ՄԻՇՏ :

Օ , րպարտութեան բարձր ամբարտակ  
Դիւրաւ հոսի հիմնայատակ :

Երբորդ զրպարտութեան կը պատասխանեմք՝  
Մեք վարժապետին պեղը փխսնակելոյ չէինք բաղձար ,  
և ցարդ և ս բաղձացած չէմք այնպիսի աթոռոյ մը : Նախ հոգի ընդ հոգւոյ կապուած և առաւել քան զհայր պատուած բարեկամնուս այդ ծանր չարութիւնը ընել դիւրին բան չէր ըստ մեր խղճի մտաց , մանաւանդ զի և կարօտութիւն չունէինք երբէք այնպիսի աթոռոյ : Օ , ի մշտնջենաւոր վարժապետ մնալոյ համար մտած չէինք ՚ի դպրոցն , զի այն տեսչութեան գործը մեր անձնական տկարութեան չէր յարմարէր՝ որ ամենուն յայտնի է , և ասոր համար մեր առևտրական



համեստ գործքերը անխափան 'ի գործ կը գրուէին 'ի շուկայն , զորս ցարդ և ս ունիմք ընկերաբար :

Երկրորդ , այդ պիսի՝ մեղ անհնարին՝ և անվա-  
յել գործոյ ձեռնամուկ ըլլալու համար՝ պէ տը  
էր որ ըլլայինք անոք և անաշխարհիկ մէկը , կամ  
վարժապետին ժառանգը և կամ վարժապետէն  
ցաւած : Բայց մեք , գոհութիւն Մտուծոյ ,  
ոչ անոք եմք , ոչ անաշխարհիկ , ոչ վարժապե-  
տին ժառանգն , և ոչ վարժապետէն ցաւած :  
Ս՝ միւռնիս ծննդեան խանձարուրնիս է , մեր  
ազնիւ հայրենակցաց յարգն ու համարումը շնոր-  
հապարտ ոգւով ամեն օր կը վայելեմք , մեծն  
և փոքրը կը ճանաչեմք և անոնցմէ ծանուցուած  
եմք , արդ եթէ մեք սխալման մէջ էինք , տա-  
րակոյս չկար որ ծնողք կամ ազգականք կամ բա-  
րեկամք կամ ծանօթք և այլն անշուշտ կը խրա-  
տէին զմեղ ետ կենալ այնպիսի անարժան գործէ ,  
որ և ոչ իսկ մտքերնէս կ'անցնէր , որուն համար  
մեր հակառակորդը այնչափ վստահութեամբ կը  
զրպարտէ զմեղ : Ընդամ մի ալ բսենք , բայց  
մեք ոչ անոք եմք , ոչ անաշխարհիկ , ոչ վարժա-  
պետէն ցաւած և ոչ վարժապետին ժառանգն ,  
որ քաղաքիս մէջ ամուր ոտնկուիւ մը յատկա-  
ցունել ջանայինք :

Երրորդ , մեք ոչ միայն մշտնջենաւոր և ընդ-  
հանրական մանաւանդ մեր անձին բաղմերախտ  
հայր մը չէինք կամէր իւր աթոռէն զրկել , որուն  
և կարող ալ չէինք , ինչպէս զրպարտիչը կը կեղծէ ,  
այլ ընդհակառակն մեր անմեղկ և հաւատարիմ՝

Ճգունքը շարունակելով կը ջանայինք համողել զինքն ըստ մերում կարի անշարժ մնալ իւր պաշտաման մէջ՝ մինչդեռ ինքը հրաժարական տալու խօսքեր կը յաճախէր, որ ինքնաբուզիս խորհուրդ մը չէր : Մեր՝ և բազմաց չեզոք անձանց վարժապետին բազմամեայ բարեկամաց բարի յորդարանքը չկրցան զօրել ընդ դէմ Թելադրու-Թեանցն, որոց որս եղած էր վարժապետը, ինչպէս մինչև իւր մահը կը խոստովանէր և ինքը ցաւելով այսպէս՝ « Որ ( տիւր ) եղայ Թելադրու-ղոց » : Ոչ Թէ վարժապետը մեղադրելոյ նպատակաւ է խօսքերնիս, Թող մեր հակառակորդը ըստ սովորութեանն ծեքածուռ մտքի չքաշկուտէ, այլ իւր ստուծեան հակառակ կուզեմք ցուցնենել իրաց բուն ճշմարտութիւնը, զի վարժապետը միայն Տաճիկ դասատուին չհանուելուն համար չէր որ հրաժարեցաւ, այլ այն Թելադրուղոց՝ իւր ոչ մտերիմ բարեկամաց՝ զտիւ և զգիշէր յորդորանքներէն, բայց այս ալ կըսեմք որ՝ վարժապետին խաբուիլը իրեն ամօթ չէր, քան զի մարդ էր, այլ անոնց զնա խաբելն իրենց չէր վայելեր : Ի վերջոյ վարժապետին հրաժարման խորհուրդն արգիլելնիս հասնելով այն անձանց ահանջը՝ դժգոմեցան մեզի դէմ, վասն զի իրենց երեկ աշխատաւի համոզմամբ շինածը՝ այսօր մեք կը կործանելինք, վասն որոյ և զայրոյթնին օրի յօր աճելու վերայ էր մեզի դէմ, բայց Թէ իրենց այս դրդմանց բուն պատճառն ինչ էր, ոչ վարժապետն ոչ մեք չէինք իմանար :

Վարժապետն սկսաւ գրել իւր հրատարական թուղթը, բայց ոչ ինքնաբուզն խորհրդով, ինչպէս ըսինք, թէպէտ Պ, Ստեփան. Պ. Պ. Փափազեանը սողոսկիչ բանիւք կը կեղծէ իբր՝ վարժապետն ինքնախոհ մտօք հրատարած ըլլայ, որով և 'ի ծածուկ եպերելի ընթացք մը կ'ընծայէ վարժապետին կամ անխոհեմութիւն մը, բայց մեք կըսեմք՝ զի մի միայն Տաճիկ դասատուին փոփոխութենէն ծագելի կարծեալ սգուտը բաւական չէր անշուշտ համոզել զվարժապետը տեղի տալ ամբողջ ժողովրդեան մը յաւելման:

Սողոսկիչ են կըսեմք Պ. Ստեփան. Պ. Պ. Փափազեանին խօսքերը, զի լոկ դասատուի մը փոփոխութեան 'ի գործ չգրուիր իւր Վահագնաբան մէջ աւելազանց բառիւք կ'ընդլայնէ և կ'ստուարացուցանէ ըսելով, այս ամէն աղէք. ճշմարտութեան դէմ ակնջներ գոցած մտի ընել չուղել. երկար ժամանակ յամառեալ փնալ, վարժապետին սրբին վերջ, ողբ, վարժապետին բերանը պարսաւաններ, հոգաբարձոց ապօրինատը ընկացք, անիրաւոյն 'ի գլուխ ելեալ, Վճ անխիղճ գրիչ, տակաւին ուր կընայիր իջեցունել ազդ մը և վարժապետը: Իրաւամբք ուրեմն Վահագնութիւն և Պարսաւատեալ անուանեցինք իւր տետրակը:

Բայց մեք՝ ալ չկարելով բանիւք համոզել զվարժապետը չգրել իւր հրատարականը՝ սկսանք գործով դէմ կենալ, այսինքն գրած առաջին թուղթը ձեռքէն առինք, և թողութիւն խընդրելով ջնջեցինք զայն, նոյնպէս և երկրորդը,



բայց թուղթ չէր պակսէր 'ի գրեւ : Արժապետն իւր երրորդ թուղթը կամեցաւ աշակերտի մը հետ հոգաբարձուաց յղել , բայց մեք վարժապետին առջև համարձակելով թուղթն աշակերտին ձեռքէն առինք , վարժապետը պատու իրեց մեզ զայն ազգին տանել , մինչև իրիկուն կ'աղաչէինք զինքը մոռնալ հրաժարականին թուղթը , հնար չեղաւ . թուղթը բաւական ժամանակ պահելնէս ետև վարժապետը լուր զրկեց շատ տեղեր որ թուղթը ժողովոյն ներկայանայ : Անչուեցանք 'ի ժողովն , ուր թուղթը չտալոյ շատ փորձեր ընեցնէս ետև՝ խօսք առինք ժողովէն որ վարժապետին հրաժարականի թուղթը չգրուած համարին , ասանկով ձեռքերնէս ելաւ թուղթը , և ժողովն զվարժապետն հրաժարած չճանչցաւ :

Առնք են եղեր վարժապետին աթոռոյն մեր բաղձանքը , այս մեր ջանքերն են եղեր , որոց համար մեր հակառակորդը կըսէ թէ՝ անյափ փոստիրոմետի վարժապետին պէլը փոխանակել կողմէն ելեր՝ Չդողաց , չբտմնեցաւ . սյսպիսի անլուր զրպարտութեամբք չարախօսել զմէնջ և աղխաղխել վարժապետին կենսագրութիւնը , սհ , թէ որ երբէք կենդանի ըլլար անիկա՝ ի՞նչ մեծամեծ և սաստիկ յանդիմանութիւններ ընելու և ծանրապէս պատժելոյ իրաւունք պիտի չունենար . .

Օրպարտողին յաջ և յահեակ

Արնայ պատիժ գոլ խայտառակ :

Այնուհետև սկսան պատգամաբերք յաճախել առ մեզ , որք կըսէին : «վարժապետն հրա-

ժարուելէն ետև դուք ինչո՞ւ կը կենաք, վարժապետին համար պէտք է որ դուք ալ հրաժարուիք: Թէև կամեցանք մեք այս ձեռնառու թիւնը ևս ընել վորժապետին, բայց գործոյն աւելի ազդուութիւն տալոյ համար իջանք դրպոցցին վարի դատիկոնը. Պ. Ստեփան Պ. Պ. Փափաղեանը գտանք իւր սենեկին մէջ և իմացուցինք իրեն թէ՛ պատգամաբերք կը թախանձեն զմեզ հրաժարիլ դպրոցէն, եթէ ձեզի ալ, ըսինք, այսպիսի ստիպմունք եղան՝ մէկտեղ հրաժարուելնիս վարժապետին աւելի աղէկ պիտի ըլլայ: Ի՞նչ դորմացանք ընդունած պատասխաննուս վերայ, քանզի ինքն՝ որ վարժապետին քեռորդին ըլլալուն մեզմէ աւելի կարծեմք իրեն կը վայլէր ընել այսպիսի բան մը, համարձակ ըսաւ. « Ինչո՞ւ պիտի հրաժարիմ դպրոցէն, ճորելեայրս ի՞նչ բարիք ըրած ունի ինչ որ իրեն համար կայէս ըլլամ. ես առ քաղաքս նոր եկած ասեմա աղաչեցի իրեն որ գոնէ առ ժամանակեայ իւր պոռնը բնակիմ և ընդորունեցին զիս իւր իւր և իւր լծակեցը, և կի՛մա շարունակ ծարր կը ըլլեն ինչ որ հրաժարիմ. ինչո՞ւ, պապճառն ի՞նչ է, երկու խախլը պոռն ունին, գլըխնին վարառի. . . ի՞նչ աղբիւն ևնաղանդ մնար, ևն, ևն, և հոգաբարձուաց համար թէ՛ ի՞նչ բարիք ըրին », զորս հիմա անխիղճ կը բամբասէ:

Ե՛ս խօսքերն սրջափ և դժուարահաւատտալի թուին ընթերցողաց սյնչափ առաւել իսկ ստոյգ իւր բերնին բառերն են և սրտին խորունկ զգացմունքն, զորս թէպէտև ջանայ ուրանալ անկաքելի է, քանզի չկրնար երբէք ուրանալ իւր անատենուան չհրաժարիլը դպրոցէն և անկէ

յառաջ վարժապետին տունը չընդունուիլը , որ  
 և քաղաքիս բոլոր Հայ հասարակութեան յայտ-  
 նի է : Արդ մեք կը մտածէինք թէ՛ քանի որ  
 վարժապետին քեռորդին այսպէս մերժեց զիւր  
 մօրեղբայրը , քանի որ միւս ևս վարժապետաց  
 մէջէն ոչ որ կը հրաժարի , այլ՝ ամէնքն ակն  
 ունէին թէ վարժապետը նորէն պիտի դառնայ  
 իւր տեղը , մեր միայն հրաժարիլն ի՞նչ օգուտ  
 պիտի ընէ , ուստի մեք ևս մնացինք մեր պաշ-  
 տօնին մէջ : Թէպէտ մի միայն մեր չհրաժարիլը  
 ան ատեն ծանր թուեցաւ ոմանց որոյ վասն և  
 բամբասուեցանք մինչև վարժապետին իւր տեղը  
 դառնալը , բայց մեք այս կտորը իրենց խղճմտա-  
 նաց կըթողումք , թող ուշի ուշով խորհին , նախ՝  
 զի հրաժարուելոյ բաւական հիմնաւոր պատճառ  
 չունէինք , երկրորդ՝ դպրոցին հոգաբարձուաց  
 և ազգին փոքր՝ ի շատէ վայրապար նեղութիւն  
 պիտի աւթէինք . վերջապէս խիստ դժուար վի-  
 ճակի մէջ էինք յայնժամ , զի յոր կողմն և՛ դառ-  
 նայիր՝ կարծեմք պիտի բամբասուէինք , զի եթէ  
 հրաժարուէինք՝ հարկ էր մեզ ազգին կողմանէ  
 նախատուիլ իբրև կողմնակալ և ազգատեաց ,  
 չհրաժարուեցանք՝ միւս կողմին ծանր թուեցաւ ,  
 այս երկուքին մէկը անշուշտ պիտի ըլլար մէջը  
 դռնուող գործիքին , մեք կամեցանք ազգին հնա-  
 դանդիլ որպէս յառաջն , նոյնպէս յետոյ և վար-  
 ժապետն ինչպէս և գրած է Օ՛ միւսնիոյ Հայոց  
 այս բամբասողը իւր տետրակին 294 երեսը այս  
 պէս , « վերջապէս ճարը կոպած ( վարժապետ ) իմօք  
 հնապանքիլ Աջ գին :



Այս սյարադայիս մէջ քեն որդւոյ մը առ մօր-  
եղբայր իւր ցոյց տուած վարձուները չտեսներ  
մեր կեղծ և առ երեսս բարեկամը՝ քանզի ըղ-  
բաղած է բամբասանօք քարկոծել այն ազգը՝  
որոյ հացն ու խնամքը իւր աղայութեան մէջ  
երեք տարի անսպասա վայելեց, և անհաւատա-  
րիմ առ վարժապետն կը դատէ զմեզ՝ որ կամե-  
լով միաբան հրաժարուիլ՝ իւր քօլը ոչ միայն  
գործք այլ և կամք չգտանք: Բայց ինքն իւր  
սյուշափ անտեղի և անարժան գործոց ոչ իսկ մէկը  
յիշելով՝ դարձեալ անհաւատարիմ կը համարի  
զմեզ առանց երբէք միաքը բերելոյ Վրիստոսի  
Տեառն մերոյ արդար յանդիմանութիւնը. «Օ՛ր  
տեսանես զչիւղ յական եղբօր քոյ, և ՚ի քում

(1). Մեր զրպարտիչը մինչդեռ քաղաքիս մէջ էր՝ իւր նմանեաց  
հետ խօսելով կրէր. «Ես անը հեփ (մեզի համար) առ երեսս Բարեկամ  
է՛մ»: Ողորմելի՛ սիրտ: Բայց մեզի հետ տեսնուած կամ տուներնիս  
այցելութեան եկած ժամանակը՝ այն ի՛նչ յափշտակիչ, ի՛նչ սրտա-  
ուռչ խօսքեր կը ցայտելին մեղքաբերուն շքութեամբ. ի՛նչ ազնիւ շարժ-  
մունքներ, ի՛նչ սիրոյ ձևեր. . . սէ, սուտ են եղեր անոնք, կեղծա-  
ւորութիւն, շղջորթութիւն ամենն ալ: Եթէ տկարութեամբ երեք  
օր դուրս չե՛նէինք՝ անմիջապէս կը վազէր կուգար «Ի՛նչ էլա՛, է՛ք  
Բայրո, ըսելով. «Ի՛նչ պարսկեցա՛, ի՛մ ի՛նչու էլա՛, յերա՛խ ստափի՛ ցո-  
ւեցա՛, Տե՛րը ի՛րե՛ յերե՛ւել և յաներե՛ոյն զ՛րջանա՛ց և այլն: Այս ի՛նչ  
տեսակ եղբայրսիրութիւն է, և ի՛նչ տեսակ բարեկամութիւն, մինչ-  
քեռ Մեսրոպեան գարրոցին մէջն էր, մինչդեռ ժողովրդեանս ծոցին  
մէջն էր և մեր քօլը. թէ՛ գարրոցին, թէ՛ ազգին և թէ՛ մեզի համար  
զրպարտութեանց պատկանող արաններ կը ընցունէ և կը պատրաստէ ե-  
ղեր՝ միանգամայն զուարթ և իրր անկեղծ զիմօք երեսնիս նայելով,  
կը գրէ եղեր իւր դառն և վատ Պարսաւատետորը ՚ի Մեսրոպեան  
վարժարանիս: Երբեմն այսպիսի որտի մը խորութիւնը չափել՝ ընթեր-  
ցողաց կը թողումք: Եւ առաւել զարմանալին է՝ որ մեզի և այլոց  
համար կեղծ բարեկամ կ'ըսէ իւր տետրին մէջ՝ կարծելով զամէնքն  
ընեն ըստ իւր սրտի՝ ըստ ճաճկտկան առակին:

ականդ զգերանդ ոչ տեսանես : կամ զիարդ ա-  
սես ցեղբայր քո , թող հանից զչի զդ յականէ  
քումմէ . և ահաւասիկ 'ի քում ահանդ գերան  
կայ : կեղծաւոր , հան նախ զգերանդ յականէ  
քումմէ , և ապա հայեսցիս հանել զչիւ զն յականէ  
եղբոր քոյ » : Ապրի . է 3 - 5 :

Այսպէս Պ . Ատեփ . Պ . Պ . Փափաղեանը ա-  
ռանց իւր գործերը տեսնելոյ՝ անընդհատ ինչ-  
պէս և ցայժմ նոյնպէս ան ատենն և ս կը բամ-  
բասէր զմեզ , և իւր մեղրաշուրթն լեզուանու-  
թեամբն Վ յանկոյց գրաւեց իւր քանի մը հա-  
սակակցաց միտքը , որոնք սկսան տիգօք աչաց և  
խէթիւ նայել մեր վերայ . և զի կիրքերը դիւ-  
րավառ լուցկիք են , դժբաղդաբար երթալով  
նախատինք , զրպարտութիւնք , երգիծանք սկսան  
կարկտել մեր ետեէն 'ի յիշեալ անձանց . ասով  
մեր թշնամւոյն սև սխն ու անբուժելի մաղձը  
քիչ մը կը հեշտանայ : կը ցառէինք իւր՝ և իրմէ  
խաբուածներուն վերայ , կ'ուզէինք որ իրենց  
սխալը ճանչնան և ոյնպիսի անհեթեթ զրաբա-  
նու թեամբք չաղաղմաղակեն հասարակաց միտքը՝  
բայց 'ի զուր : Ան՝ որ իւր տետրակին երեսները  
ըստ մեծի մասին Ապոստոլ , Աստիանաճախն , և ն  
բառերով ծածկեր է , և թրեւտ ուղեորեալ  
նաւու մը 'ի յօջա խոտորիլը՝ Ապոստոլայի ինն Աս-  
խապարտարտութենէ ըլլալը իբրև խորին երկիւղս :

(1) . Հետը խոտորները կամ իւր տետր տեսնողները կը զգան մեծ  
ըսածին ճշմարտութիւնը : Բայց լեզուանութեան յաջողակութիւնը  
միշտ յաւալ չէրթար , և չարիքը՝ գործողին վտանգ կը բերէ . կ'ըսէ  
Մարգարէն . « Մարդոյ լեզուանոյ մի՛ յաջողեցի 'ի վերայ երկրի ,  
քոյ մեղաւոր չարիք իւր որսացեն 'ի կորուստ » :

ծու թեամբ մը և նուրբ Ատուածաբանութեամբ  
իմն կը գրէ , ինքն , կըսեմք , և իւրայինք չէին  
խղճէր յայնժամ անիրաւ և դառն չարախօսու-  
թեամբք զմեզ և զայլս բամբասել . բայց մեք  
օխակալութեան և վրէժխնդրութեան կիրք չը-  
գործածելով՝ անյիշաչար եղանք իրենց գործոյն ,  
և ուղելով անուշել անոնց սիրտը՝ գրով մեր  
սրտին զգացմունքն յայտնեցինք իրենց իբրև  
պատասխանի իրենց վասն մեր անարժան բամ-  
բասանացը : Ահաւասիկ մեր գրածը .

“ Հայր . . . թող մեզ զպարտիս մեր , որպէս  
և մեր թողումք մերոց պարտապանաց ” : Ապրիլ .  
դ . 12 :

Ար խաչելոյն եմ հետևող Յիսուսի ,  
Հայա ըզխօջ վշտաց բարձեալ 'ի յուսի ,  
Օ Ատուածորդւոյն կ'սեւ ըզսուրբ Ճանապարհ ,  
Օ ի զան , իտեմս . . . սիրտ . . . միլինիր արհամարհ ,  
Բարեկամք իմ , հարբ և եղբարք բազմամեայք  
Թշնամանացդ ընդ աստարեզ՝ զոր բանայք  
Իմ առաջի՝ ոչինչ երկեայց արշաւել ,  
Թէ և լուտանք ձեր զիս ձաղեն առաւել :  
Օ ի Պրսակիչն ահա Յիսուս 'ի բարձանց  
Քաջալերէ օրինակաւն գերազանց :  
Նոր Գողգոթա դժուարուղի ինձ հանդէպ ,  
Ոտխն առիւծ յարուցանէ չարագէպ :  
Այլ երկիցէ՞ սիրտ՝ որ յուսայ առ Ատուած  
Քաւ , ոչ այժմիկ և ոչ շնչոյս 'ի սպառուած :  
Հայա ուրեմն , զի՞ կայք , հարէք զիս համբունն ,



Թէ կամք են ձեր՝ և ըզինուածս հողաբունն ։  
 Այլ յիս պատկեր գոյ կենդանի՝ Արարչին ,  
 Յոր ոչ գրծել բաւ են և սայրք ձեր վերջին ։  
 Անցցին զինև , ո՛հ , ըզբօսանք մարդկային ,  
 Հեղցին զինև ալիք խոժոռք դժոխսային ,  
 Այլ Բարձրելոյն թափէ յալեացդ զիս անշուշտ  
 Իբր անդնդոց զՀիւրն 'ի կիտին սընակուշտ ։  
 Այլ գո՛ւ՝ Խաչեալ Փրկիչըդ իմ և Աստուած ,  
 Որ զթշնամիսդ՝ զԱջոյդ մեծի ըզհաստուած ,  
 Խընայեցեր յանկարծահասըն պատժոց  
 Աղօթելով առ Հայր , պարզեալ 'ի յոգւոց ,  
 Քեզ պսղատիմ երկրպագեալ հողամած ,  
 Վասն հեծութեան ամենահէգս արտասուաց ,  
 Օրհնեա՛ , մողթեմ , որ ըզթշուառս ապաղէն ,  
 Դառնահամբոյր բանիք ձաղեալ բամբասեն ։  
 Օրհնեա՛ զըթուենն , որ ըզանթիս կայծականց  
 Հեղուն զինև ըսպառնալեօք խրոխտապանձ ։  
 Հնորհիւ քոյին շիջո՛ զզայրուցսն ապաժոյժ ,  
 Յոր բորբոքեալ յանգէտս զինէն կան վակժոյժ ։  
 Ներեա՛ նոցա զըսպարտութեանցն ըզգումար ,  
 Քեզ մոռացօ՛ք՝ և երգիծանքն անհամար ։  
 Փոխան դժնեայ ատելութեանցն՝ որ առ իս ,  
 Օղորմա՛ թիւն գոցեն աստ և յապառնիս ։  
 Բնդ խնձղանացն և անիծից փոխարէն ,  
 Օրհնութիւն քո իջէ 'ի գլուխսն համօրէն ։

« Մի սատակեցես զիման խաճանողն , այլ փոս  
 փոխեցես , իլեալ զխոտան բարս երկրաւորս ,  
 զբարիսն արմատացուսցես և յիս և 'ի նոսին » ։  
 Եւրե՛լ . բան ձգ ։

Ա . Ս . Յ . Պ .

Օ միււռնիա ։ 'ի 11 Մայիսի 1856

Այս գրուածքը թէև տպագրութեան տուած չէինք, սակայն շատերը կարդացին 'ի սկզբան և գիտեն :

Ի այց կ'երևայ թէ՛ այսչտփ դառն գրուարտութիւնք բաւական յագուրդ չմտուցանելով մեր հակառակորդին ոխակալութեանը՝ անկէղ ընտելեան աններելի մեղք մնալ կը յաւելու մեր վերաբերելով . “ Ի այց յայսցանէ իւր ( վարժապետին ) սըրփին աւելի մեծ վերք մ'եղած էր , և այն ցաւը փետց փնջե իւր մահը՝ անոր անկէղջ մնալը ” :

Թէոր ձեռքէն գար՝ կարծեմք՝ եկեղեցիէն ալ անհաղորդ պիտի ընէր զմեզ Արքայութենէ ալ՝ և թէոր իշխանութիւն ունենար , աւ մահացու մեղք ունի և անկէղջ է՝ ըսելով ուղղակի 'ի դժոխս կը մատնէր : Որչափ ծիծաղաշարժ և խեղճ կըլլայ գրիչ մը , որ կրից բորբոքէն կը մղուի :

Այս անլուր գրուարտութիւնը բնաջինջ ընելու համար բաւական է ըսել թէ՛ մահացու մեղք մը չկար մէջ տեղը , յորմէ հետևէր զզջալ կամ անզեղջ մնալ . մանաւանդ վարժապետն իւր պաշտօնին դառնալէն յետոյ ըստ առաջնոյն միմեանց հետ սիրով և ակնածութեամբ վարուելու նիս , որ ամենուն յայտ է , ամէն<sup>մ</sup> գէշ կարծիք կը փարատէ . և ազգին մէջ ո՞վ լսեց մէջերնիս գժտութիւն մը ծագել մինչև 'ի վախճան վարժապետին , որ ութ ամսոց չափ ժամանակ կընէ : Կ'երևի թէ՛ վարժապետին և մեր մէջ եղած անփոփոխ սէրը շատ դայցեր է յայնժամ մեր թշնամւոյն մաղձին , որ տեղտեղ կը տարածայ .

նէր ըսելով. « Սոբէնն և Էրֆէնայը Տէկաէղ չեն կրնար  
 ըլլալ » և այլ ևս աղգի աղգի խօսքեր : Այս-  
 չափ շատ դարմացաւ մեր սիրոյն վերայ . բայց  
 բարի օրինակ առնուլ պէտք էր և ուրախանալ  
 մեր բարւոյն վերայ , և ոչ թէ նախանձաբեկ  
 տրտմիլ , որ յիրաւի մահացու մեղք է , կը ցան-  
 կամք որ ինքն անդեղ ջննայ իւր վարուց մէջ ,  
 թէպէտ այլ ևս շատ ասպցոյցներ ունիմք յայտմ  
 մասին յառաջ բերելու . վարժապետին առ մեզ  
 ունեցած խնամքը և մեր առ վարժապետն որ-  
 դիական սէրը և հոգատարութիւնը , սակայն  
 հարկ չկայ ըստ ինքեան յայտնի բան մը նորէն  
 փաստաբանել . միայն բաւական է ըսել զի մա-  
 հացու մեղք մը չկար մէջ տեղը , յորմէ զեղջ  
 կամ անզգութիւն հետեւէր . թող ինքն առնու  
 իւր նմաններն և ուղածնուն չափ զրպարտեն ըզ-  
 մեզ և զազգը . բայց գիտնան իսկ զի ողջամիտ  
 անձինք դիւրախաբ չեն տղոց բամբասանայ .

Սեր բամբասողը Օմիւռնիոյ Ս . Սերոպետան  
 վարժարանին 1856 տարւոյն քննութեան և պար-  
 դեաբաշխութեան հանդէսը Բոլորովն պղպայտան և  
 յանձրացուցիչ դատելով՝ կը ջանայ նետահարել ըզ-  
 հոգաբարձուս , չգիտելով իսկ թէ՛ ո՞ւր կերթայ  
 իւր նետը . Արդ ի՞նչպէս կը համարի արդեօք .  
 վարժապետին հազիւ քանի մը ամիս դպրոցէն  
 պակսելովն աշակերտք բոլորովն մոռցան վար-  
 ժապետէն սորվածնին՝ և այբուբենէն սկսան .  
 եթէ այնպէս կը համարի , աւելի մեծ գովեստից  
 արժանի պէտք է համարել զայն հանդէսը , զի



Ի սուղ ժամանակի հրաշարի յառաջագիմուծիւն մը տուած կըլլայ դպրոցին : Իսկ եթէ կը համարի թէ՛ վարժապետին աւանդած ուսմունքներն էին որ քանի մը ամսոց յաւելուածով ներկայացան ան հանդիսին մէջ, ինչպէս կը յանդգնի վարժապետին ուսմունքներն տղայական էն համարել : Այսպէս ահա Պ . Ստեփան Պ . Պ . Փափաղեանը իւր ոխը յագեցունելոյ բորբոքէն միտքը շիտթած՝ իւր ըսածներն ինքն ալ չէ հասկցեր . վասն որոյ կը ցաւիմք զի հանգուցեալ վարժապետին կենաց գրուծիւնը իւր պարտոխաթափ գրչին տակ չարչարեալ նեխեալ բան մը դարձեր է : Թէպէտ այլ ևս բազմաթիւ սխալանօք և զորպարտութեամբ լի են Պարսաւատետրին շատ երեսները, բայց մեք անոնցմէ սակաւուց համար խօսեցանք, յորոց կիմացուին և մնացորդաց արժէքը, որք ոչ այլինչ են բայց միայն չքոտի և անզօր և տղայական զրպարտութիւնք :

Առ այժմ իւր Անսագրո-թիւն մակագրած տետրակին վրայօք այսչափ խօսիլը բաւական համարելով՝ սկսինք հիմա քանի մը խօսք ալ իւր ապագայ տետրակի մը համար խօսել, զոր կ'սպանայ հրատարակել եթէ իւր խօսքերն իբրև պատգամ իսկոյն ընդունելի չըլլան : Ամիւռնիոյ հասարակութենէն, կամ եթէ մեզի դէմ չզայրանան :

Պ . Ստեփան Պ . Պ . Փափաղեանը քաղաքս բնակող իւր հասակակցաց ոմանց Ո՛րէկից Բարեկամ վերնագրով նամակներ գրած է ( յորոց քանի մը հատը կարդալոյ պատիւն ունեցանք, զի բերին

և ցոյց տուին մեզ), որոնց մեջ կը թեւադրէ որ յորդորեն զմեզ անպատասխան չթողուլ իւր տետրակը՝ այսպէս տողելով. «Վրբեցէ՛ք զանի (մեզի համար կըսէ) որ պէտքիս պատասխանը գրէ, զի ուրիշ շատ բաներ ունիմ գրելու և զինչը պատարակելու: Ա՛յ սատանայական բանասրկութիւն: Եւ ի՛նչ. ձեռագիր տետրակ մը ունի եղեր ՚ի ձեռին՝ բովանդակող վերջին դէպքին պարագաները, յորմէ նորանոր փաստեր պիտի հանէ եղեր մեզի դէմ, տետրակին հեղինակ զմեզ համարելով կամ վկաներ գտնելով ևն ևն: Անշուշտ զրպարտու թեանց չի՛ք չափ և սահման, զի ճշմարիտ բանք հունաւոր են, իսկ սուտք՝ անհուն և անսպառելի: Եւ յց մեք խոստացուած զրպարտութեան այժմէի տամք պատասխան, թէպէտ կարելի է որ ետքը փոխէ իւր միտքը:»

Արդ մեծասպէս կը սխալի եթէ ան տետրակին հեղինակ զմեզ կը համարի, զի նոյն տարւոյն հոգաբարձուք իրենց մեջ միակամ հաճութեամբ և ստորագրութեամբ գրեցին զան՝ ինչպէս և գործն ինքզինքը կը ցուցունէ: Այս, տետրակը կը բովանդակէ նոյն ատեններն գումարուած բազմաթիւ ժողովոց յայտարարութիւնը, որոց մեք ներկայ չէինք և չէինք կրնար ըլլալ, զի ոչ ժողովոյ յանդամ էինք, ոչ խորհրդական, ոչ ներքին և ոչ արտաքին. արդ շտեասձ և չգիտցած բաներնիս ինչպէս կրնայինք հեղինակել: Արկարգը՝ հոգաբարձուք ան տետրակը գրելոյ անկարող անձինք չէին, այլ անկէ աւելի գրելոյ

արժանաւոր գրիչներ կային անոնց մէջ, ինչպէս  
ինքն իսկ գիտէ : Արրորդ՝ հոգաբարձուաց գըր-  
չու թեան նախատիպ հատուածները, թէպէտե  
ջնջեր էինք չկարծելով որ մը անոնց պէտք ըլլա-  
ւիքը, սակայն բարեբաղդաբար անոնցմէ հատ-  
ուածիկ մը դեռ ողջ մնացեր է, և պատրաստ  
նոր զրպարտութեանց դէմ դնելոյ համար : Թող  
ուրեմն անդիէն սրէ՛ զրպարտութիւնն իւր սու-  
րը, թող լարէ իւր աղեղը : Ճշմարտութիւնը  
աս դիէն կը ձայնէ . « Սուրբ նոցա 'ի սիրտս իւ-  
րեանց մտցեն, և աղեղունք իւրեանց փշրես-  
ցին » : Բայց և աներկիւղ եմք խոստովանել զի  
տեարակը մեք ևս՝ ինչպէս և այլք՝ օրինակեցինք,  
և կը յուսամք որ ասիկա մահացու և աններելի  
մեղք մը չհամարիր մեր հակառակորդը՝ քաջ գի-  
տելով զի մեք միայն չէինք օրինակողը, այլ և  
մեզի պէս ուրիշ ստորակարգեալք :

Նմանապէս միտք ունի եղեր, ինչպէս կը լսեմք,  
Սեօրոպեան վարժարանին՝ վարժապետին վախ-  
ճանէն ետև ունեցած ընթացքը պարսաւել :  
Ըսկէ մէկուկէս տարի յառաջ իւր գրած և կար-  
դացած ճառը և դովեստը յաւուր պարգեա-  
բաշխութեան վարժարանիս՝ կուտամք իրեն իջ-  
րև պատասխան իւր գրելուքին :

Ե. յաջափ ինչ 'ի սպառնալեաց թշնամոյն ա-  
կանջնիս հասած ըլլալով՝ կանխեցինք տալ հա-  
մառօտիւ պատասխանը, բայց չեմք գիտեր թէ՞  
ի՞նչ ուրիշ զրպարտութեանց ստոյններ կը կկէ  
մեղի համար, իսկ եթէ մահկանացուի մը մեղք



քերը կը ջանայ թուել, տարբեր բան է այդ,  
 բայց ի՞նչ հարկ հեռուանց և կարծիքով դա-  
 տել քննել սուտումուտ բաներ գրել և մեղան-  
 չել, թող գայ առ մեզ, միայն թէ իբրև քրիս-  
 տոնեայ եղբայր գայ, և տեսնէ զի մեք յետին  
 մեղաւոր եմք և անկարելի է թուել մեր մեղ-  
 քերը: Այլ եթէ իբրև յանդիմանական խրատուք  
 վարուիլ կուզէ մեր հետ, կընդունիմք և զայն  
 'ի բոլոր սրտէ, զի անմիտ է՝ որ կ'ատէ դժանդի-  
 մանութիւն: Իսկ եթէ վիճաբանութեանց մասին  
 իւր նորաթեք գրիչը վարժել կուզէ, մեք ժա-  
 մանակ չունիմք իրեն համար զատ դպրոց բանա-  
 լու, քանզի քաղաքիս մէջ մեր ժամանակին ի՞նչ  
 աստիճան սուղ ըլլալը ինքն աչօք տեսած է,  
 վասնորոյ թող չկարծէ թէ երկիւղ կըկրեմք իրմէ:  
 Արջայէս եթէ ունի ձեռքը ճշմարտութիւն՝  
 թող ելնէ դիմացնիս, ապա թէ ոչ՝ զրպարտու-  
 թեանց պատասխան չեմք տար, զի անոնք ծայր  
 չունին և եօթնագլխի շիգրայի կը նմանին. որոյ  
 մէկ գլուխը կտրելով տեղը եօթն կը բուսնին:  
 Ճշմարտութեան մէկ անգամ խօսուիլը բաւական  
 է իրաւունք ճանաչողաց համար, իսկ զրպարտու-  
 թեանց հաղար անգամն ալ քիչ է. թող երթայ  
 մեր հակառակորդը իւր վրիժուն համար ուզա-  
 ծին չափ զրպարտութիւնք խծբծէ, իւր քանի  
 մը խեղճ համախոհներէն զատ ունկնդիր չունի,  
 և չյուսայ որ պիտի ունենայ, ընդ վայրահաչ  
 խօսքեր են անոնք յունկն ճշմարիտ առաքինեաց,  
 որոնք քաջ կը դատեն բուն պատասխան մը, և

տի 'ի բերան չմնալոյ համար ամչնալուն գրուած տղայական պատասխան մը, և թշնամանելը պատասխան տալ չէ: Բայց ժպիրհները ատենօք յանդգնեցան և ՂՆԵՐՏԷՍ Շնորհալին կեղծաւոր և շահախնդիր դատելով՝ գրել իրեն. «Օգոյշ լէ՛ր 'ի կեղծաւորութենէ որպէս յանհաւատութենէ»: Սեբ ո՛ւր կը մնամք, և ինչո՞ւ պիտի չսփոփուիմք թէ որ զրպարտութեանց առարկայ ընէ զմեզ մեր թշնամին: Յիրաւի ազատ ասպարէզ մնէ աս իւր առջև, զոր ճրագով փնտրելով չէր կրնար գտնել, յորում ազատ է իւր բարուց բերքը 'ի գործ դնել, երկիւղ չունի բնաւ պատասխան ընդունելոյ, կրնայ հազար և մէկ կերպիւ չարախօսել, զրպարտել, հայհօյել, ևն. միայն թէ՛ հազար անգամ ալ գրէ՛ հազար անգամ ալ մեր պատասխանը աս է. թող կարգայ և պատասխանը առած ըլլայ. մեր մեր ըսածէն չեմք շեղիր, զի ճշմարտութիւնը մէկ է՝ երկու չկրնար ըլլալ, Եւ եթէ իւր՝ կամ իւր համախօհներուն ստակը և չարախօսութիւնքը շատ են, մեր համբերութիւնը աւելի շատ է, որ ամենէն վերջը կը լռեցունէ զիրենք, որ մէ աւելի վեհանձն և վսեմ յաղթութիւն չը կրնար ըլլալ ընդդէմ զրպարտութեանց: Եւ չը կարծէ թէ մեր իւր տղայամտութեան հետ խօ»

(1) Տե՛ս 'ի ճառագ. Տետրակ Բ. 1858 թուին, զոր աշխատասիրեն 'ի Մարտի 2-ին Եւրոպայի Մեծխմատ Մ. Մեր Մերեանց Արժանապատիւ և հարազատ մօրեղբայր իմ, և որդի իւր պատուելի և ուսուցիական Զարմայր Մերեանց:

տակցել յանձնառու եղանք, ամենեին ոչ ոյլ  
 Հայազգի բարեսէր և արդարասէր հասարակու-  
 թեան ուղղեալ են մեր խօսքերը, զի 'ի մեծաց  
 մինչև ցփոքունս արդար բողոքմամբ կը դատա-  
 պարտէին իւր վատ Պարսաւատեարը :

Յիրաւի և ցաւակցութեան արժանի է իւր բար-  
 կասիրտ բնաւորութիւնը, որով քանի՛ քանի՛ ան-  
 դամ փորձանաց ենթակայ եղաւ, քանի՛ բարե-  
 բարոյ մարդոց հետ կռուեցաւ, քանի՛ անգամ  
 Սեորովպեան վարժարանէն դուրս եղաւ երկոյ  
 ամաց մէջ. ասոնց ամէնը նկարագրելոյ համար  
 նոր տետրակ մը պէտք է՝ մակագրեալ Տեսարան  
 Լըրեամեայ Կարմախանի՝ Օ. Տրանի, Պ. Ստեփանի Պ.  
 Պօղոս Փակապետի :

Հետաքրքրական բան է յիրաւի գիտել նաև  
 թէ՛ ինչպէս երեք տարի մնաց նա 'ի ծոցի մե-  
 ղում իւր սյսպիսի բարուքն : Ասոր երեք ինչ  
 ունիմք տալ պատասխանի : Առաջինն է, իւր  
 հանապաղ 'ի կիր արկած այլ սիրտ և այլ բերան  
 ունեւիմք, զոր մեզմէ աղէկ կը բացատրէ երանե-  
 լին Լըրիկ՝ այսպէս. «Նաև կեղծաւորն կեղծա-  
 ւորեալ որ մեղմեխանօք ընկերին կամիցի վնաս  
 առնել, թագուցանէ զկեղծաւորութիւնն, և  
 որպէս թէ բարւոյ ինչ խրատ տայցէ՝ հրապու-  
 ղեալ արկանէ ընդ վնասիւք զանմեղն : և եթէ  
 ոչ զբարւոյ դէմս զգեցեալ մեղմեղիցէ, չկարէ  
 ստերիւրել յիրաւնց զիրաւագէտն » :

Երկրորդ, 'ի շնորհս մօրեղբօրն և որբութեան  
 իւրոյ միշտ ազգին գթութեան և հողաբարձու :



այց վեհանձնութեան առարկայն ըլլալով : Եր-  
 րորդ , ամէն ժամանակ քրթմնջիւնը պակաս չը-  
 լալով , մինչ զի երբոր քաղաքէս պիտի մեկնէր ,  
 ըստ որում վարպետութեամբ իմն կ'զգուշանայր  
 կռուով մեկնելու , հազիւ քսան աւուրց չափ  
 կրցաւ ծոմ կենալ 'ի մաքառմանց , և 'ի վերջին  
 աւուրս եկնու առ մեզ իւր հրաժարական ողջոյնը  
 տալ առաջի եղբարց մեր ըսելով “ Հիմա որ ամէն  
 բան խաղաղ է մնա՛ , բարեկրտէմ յեզի եւ Պօլիս պիտի երկամ :  
 Ահա այս կերպիւ կրցաւ երեք տարի մնալ առ  
 մեզ . բայց մեք կը կրկնեմք խօսքերնիս , յիրա-  
 ւի մեծի ցաւակցութեան արժանի է իւր հրա-  
 տոչոր բնաւորութիւնը , որով ինչպէս 'ի Սեւ-  
 րովպեան վարժարանի՝ նոյնպէս և այժմ իւր  
 եղած տեղը հանդարտ չկենալով գուցէ թափա-  
 ռական և խեղճ կը մնայ . . . երանի թէ՛ մեր  
 վերջին խօսքերն ազդէին իրեն , երանի թէ՛ գո-  
 նէ զմեզ ամչցունելոյ համար բնութիւնը փոխէր  
 և հեզահամբոյր վարք մը ունակացունէր անձին  
 ինչպէս յաճախ կը խրատէինք զինքը մինչ մեր  
 հետն էր : Սեծապէս գովելի վրէժխնդրութիւն  
 մը ըրած կըլլայ՝ եթէ , ինչպէս ըսինք , զմեզ  
 ամչցունելոյ համար մեր խրատուցն հետեւի , վար-  
 քն ու բարքը փոխէ , զրպարտութիւնքն 'ի բաց  
 թողու , փոխանակ ուրիշները կեղծ անուանելոյ  
 կամ սիրտը բերանին կամ բերանը օրտին հա-  
 մաձայնէ , ազգը՝ և մասնաւորաբար ազգին մե-  
 ծերը չբամբասէ , որով և ազգին խնամոց ներքե  
 շարունակէ բարոյական գիտութիւններ ուսա-

նիւ, քիչ մ'ալ դրաբառ լեզուն մշակելոյ հոգ  
 տանի, որ դասատուի մը խիստ հարկաւոր է :  
 Ասանկով կը յուսամք որ յաղաստանի մնայ, և  
 յառաջ ևս երթայ, որուն 'ի բոլոր սրտէ կը  
 փափագիմք : Իսկ եթէ, Աստուած մի արասցէ,  
 դժբաղդութիւն մը պատահելու ըլլայ իրեն,  
 թող չյուսահատի և չդիմէ օտար բազկաց, զի  
 վեհանձն է Հայոց ազգը ուր ուրեք և իցէ,  
 վերստին անյիշատար կ'ըլլայ իւր դառն լուտա-  
 նաց, և կը դարմանէ իւր տառապելութիւնը  
 մինչև ցվերջ : Բայց սիրոյ մօտանուցն արժանի  
 լինելոյ համար հարկ է Սեղայ յերկնս և առաջի քո  
 չէ թէ ամօթալի՝ այլ պանծալի խօսքը 'ի սրտէ,  
 բղխի ճշմարտապէս, զի մի իւր անիրաւ դատու-  
 դութիւններն պահուին դատուելոյ համար յար-  
 դար դատաստանի Անաչառ, Դատաւորին :





















